Եթե մենք ընդունում ենք, որ ադրբեջանցիները պետք է գան եւ ապրեն Հայաստանում, ստացվում է, որ հայերին բռնի չեն տեղահանել Սումգայիթից, Բաքվից, Գանձակից, որ Ադրբեջանը ցեղասպանական գործողություններ չի իրականացրել Արցախում: Այսինքն, այս վարչակարգն արդարացնում, սպասարկում է նրանց ցեղասպանական նկրտումները:

Կարդացեք՝ էջ 4

Ի՞նչ տեսավ նա այն երիտասարդի աչքերի մեջ, որն ասաց՝ «ինձ տենց չնայես»: Տեսավ իր ողջ ներքին դատարկությունը, իր կառավարման տարիների ողջ սնանկությունը, հասկացավ, որ դա վերջն է, որ դանակը հասել է ոսկորին, եւ իր էյֆորիկ ընտրազանգվածը գոնե մեկ մարդով չի կարողացել ավելացնել, մի բան էլ մսխել է ունեցածը:

Կարդացեք՝ էջ 5



Աղետներն անհաշիվ են: Գլխավոր աղետը վարչապետի աթոռին սոսնձված անձն է՝ Նիկոլ անունով կատարյալ հիվանդ մեկը: Ինչպես մեր իմաստուն ժողովուրդը խաբվեց նրա սին խոսքերին, ինչպես գահին բազմեցրեց այդ «տիեզերական քաջնազարին»՝ մի անգրագետի, որը եկավ ու երկիրն իջեցրեց իր մակարդակին: Մենք դրան էինք արժանի:

Կարդացեք՝ էջ 7

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 50 (4185), 31 մարտ, երեքշաբթի, 2026

www.hraparak.am

Փետրվարի 26-ին դատարանը՝ դատավոր Հրաչյա Մեխակյանի նախագահությամբ, ԱՄՆ-ում ՀՀ դեսպան Նարեկ Մկրտչյանի եղբորը՝ Մկրտիչ Մկրտչյանին, մեղավոր է ճանաչել եւ դատապարտել ազատազրկման 1 տարի ժամկետով՝ պատիժը պայմանականորեն չկիրառելով եւ սահմանելով փորձաշրջան՝ 1 տարի ժամկետով: Դատավոր Հրաչյա Մեխակյանը, ի դեպ, ԱԺ նախկին պատգամավոր Ռուբեն Հայրապետյանի քրոջ որդին է, Արմավիրի նախկին քաղաքապետ Ռուբեն Խլղաթյանի փեսան: Կաշկանդված էր դատավորը հայտնի ՔՊ-ականի եղբոր գործով, որին մեղադրանք էր առաջադրվել ապօրինի զենք պահելու համար: Նմանատիպ մեղադրանքով, հիշեցնենք, արցախյան պատերազմների հերոս Աշոտ Մինասյանը մեկ տարի ազատազրկման է դատապարտվել եւ արդեն մոտ 4 ամիս է՝ կալանավայրում է, քանի որ նրա տնից 100 մետր հեռավորության վրա զենք են հայտնաբերել: Իսկ դեսպանի եղբոր գործով դատարանը ոչ միայն պայմանական է կիրառել, այլեւ, պարզվում է՝ դատարանի որոշումից գոհ է նաեւ Գլխավոր դատախազությունը, որը չի բողոքարկել առաջին ատյանի որոշումը, եւ այն մի քանի օր առաջ ուժի մեջ է մտել: Գլխավոր դատախազությունից հաստատեցին մեր տեղեկությունը. «Դատախազության հայցած պատժաչափն ամբողջությամբ դատարանի կողմից բավարարվել է, հետեւաբար, բացակայում է վերաքննիչ բողոք ներկայացնելու անհրաժեշտությունը»:

ՔՊ-ն 2 օր առաջ հրապարակեց ներկուսակցական քվեարկության արդյունքները: Հիշեցնենք, որ մոտ 1000 ՔՊ-ական պատվիրակները քվեարկությամբ պետք է որոշեին ՔՊ նախընտրական ցուցակի առաջին 50 տեղերի դասավորվածությունը: Ըստ այդմ, 933 ձայնով ընտրացուցակը գլխավորում է Նիկոլ Փաշինյանը: Փաշինյանի դասընկեր, նրա ամուսնության քավոր՝ Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը 346 քվեով ցուցակի նախավերջին տեղում է՝ 49-րդն է: Նրա եղբայրը՝ Փաշինյանի մանկության ընկեր, ԱԺ պատգամավոր Վահե Ղալումյանն էլ 373 քվեով ցուցակի 44-րդ տեղում է: Մեր տեղեկություններով, ՔՊ նախընտրական ցուցակի 49-րդ տեղը զբաղեցնող մարզպետ Ղալումյանը շարունակ հանդիպումներ է ունենում Տավուշի մարզում բնակվող ՔՊ-ականների հետ, խոստումներ տալիս նրանց, թե ովքեր են ընդգրկվելու ՔՊ կուսակցության ընտրացուցակում, որ տեղն են զբաղեցնելու: Իբր իր անցողիկ տեղի հարցը լուծել է, ուրիշների հարցերն է որոշում:

Կեղծիքների սեզոնը բացվեց

Հայտնի փաստ է, որ ընտրությունները կեղծվում են ոչ թե բուն քվեարկության օրը, այլ դրանից շատ առաջ: Եվ այն, որ Նիկոլ Փաշինյանը շարունակ խոսում է նախկինում ընտրակեղծարարության մասին եւ հայտարարում, որ ոչ մի նախագահ օրինական կարգով ընտրված չի եղել Հայաստանում՝ սկսած 1996-ից, ոչ թե նշանակում է, որ քվեարկությունն է կեղծվել, այլ մինչեւ քվեարկությունը կատարվել են քայլեր, որոնք թույլ չեն տալիս խոսել արդար ընտրությունների մասին: Ի վերջո, երբ մարդը վերցնում էր 5 կամ 10 հազար դրամ եւ գնում ընտրության, ընտրախցիկում նրա կամքի վրա ոչ ոք չէր բռնանում, եւ ընտրությունների արդյունքները չէին նկարում, բայց մենք դա էլ էինք համարում ընտրություններ կեղծել: Նույն տրամաբանությամբ, այսօր հենց ինքը՝ Նիկոլ Փաշինյանը, ձեռնամուխ է եղել ընտրություններ կեղծելու պրոցեսին: Դրա մեջ մտնում են ինչպես գործող կառավարության քայլերը, որոնք այլ կերպ, քան ընտրակաշառք, չենք կարող անվանել՝ թոշակներ, առողջապահական ծառայություններ եւ այլն: Եվ ընտրությունների բուն քարոզարշավից շատ ավելի առաջ քարոզարշավ սկսելն ու մարդկանց խոստումներ տալը: Եվ սպառնալիքներն ու շանտաժը. եթե ես չընտրվեմ, Թրիփփ չի լինի, խաղաղություն չի լինի, անգամ արհեստական բանականություն չի լինի: Դրա մեջ մտնում են նաեւ քաղաքական հալածանքներն ու մրցակիցների նկատմամբ տեռորը, շարքային քաղաքացիներին վախ ներշնչելը եւ անսպասելի վայրերում հայտնվելով՝ հոգեբանական ճնշում գործադրելը: Դրա մեջ մտնում է նաեւ երկրով մեկ անհավասար պայմաններ ստեղծելը, երբ մրցակիցներին խանգարում են գրասենյակներ վարձակալել, եւ գրասենյակներում աշխատողների աշխատավարձը իրենց վայ-իրավապահները գնահատում են որպես ընտրակաշառք: Անբարո մեթոդներով ընտրություններ կեղծելու սեզոնը բացված է:

Ներիշխանական կուլիսներում ՔՊ ընտրությունների երկրորդ փուլից հետո ակտիվորեն քննարկում են, թե ինչպես է առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանն այդքան ձայն ստացել՝ նա ամենաշատ ձայներ ստացած կինն է եւ նախընտրական ցուցակի եռյակում է հանգրվանելու: ՔՊ-ում անարդար են համարում Ավանեսյանի ստացած ձայները, հիշում են, որ ամիսներ առաջ՝ սեպտեմբերին, նա չկարողացավ վարչության անդամի ընտրություններում այնքան ձայն հավաքել, որ տեղ զբաղեցնի կուսակցական ղեկավար մարմնում, եւ ներկայիս քվեները պայմանավորում են առողջապահության պարտադիր համակարգի ներդրմամբ, որը դրական ազդեցություն է գործել հանրային որոշ շերտերի, այդ թվում՝ նաեւ ՔՊ շարքային ընտրիչների մոտ, ուստի կարծում են, որ Անահիտ Ավանեսյանն անհավասար մրցակցության մեջ է եղել իրենց հետ: Ի դեպ, հիշեցնենք, որ Արարատ Միրզոյանն էլ ՔՊ վարչության անդամ չէ, նա չէր էլ առաջադրվել, բայց երկփուլ ընտրությունների արդյունքում Փաշինյանից հետո է՝ երկրորդը:

ԵՐԿՎՈՐՅԱԿՆԵՐԻ ՊԱՊԸ ՀԱՅՏՆԻ ԳՈՐԾԻՉ Է ԵՂԵԼ

Երեւանի Սուրբ Աննա եկեղեցում Փաշինյանի ներկայությամբ տեղի ունեցած միջադեպից հետո ձերբակալված 18-ամյա երկվորյակ եղբայրներ Դավիթ եւ Միքայել Մինասյանները պարկեշտ եւ ինտելիգենտ ընտանիքից են: Երիտասարդները 12-րդ դասարանում են սովորում՝ գերազանց, քաղաքական գործունեությամբ չեն զբաղվում, ինչպես փորձում էր ներկայացնել իշխանական քարոզչամեքենան: Նրանց պապը պետական, քաղաքական, հասարակական գործիչ, սովետական տարիներին Ղափանի կուսշրջկոմի առաջին քարտուղարներից էր՝ Ռաֆայել Մինասյանը, որի անունով է կոչվում քաղաքի կենտրոնական փողոցներից մեկը, եւ նախատեսվում է նրա արձանը տեղադրել քաղաքում: Ըստ կապանցիների, Մինասյանն է իրենց քաղաքը ծաղկեցրել: Հետագայում զբաղեցրել է տարբեր պաշտոններ, եղել է նաեւ Հայկական ՍՍՀ բնակարանային-կոմունալ տնտեսության մինիստրը: Տղաների մասնակցությամբ միջադեպի վերաբերյալ քրեական վարույթ է նախաձեռնվել 2 հոդվածով՝ խուլիգանություն եւ պաշտոնատար անձի օրինական ծառայողական կամ քաղաքական գործունեությանը միջամտելը, ինչը նշանակում է, որ Փաշինյանը եկեղեցի պատարագի էր գնացել՝ քաղաքական գործունեությամբ զբաղվելու:

ՍԿԱՆԴԱԼ

ԵԹԵ ՈՎ ԵՐԲ ԻՆՉ ՈՒԶԻ, ԿԱՆԻ, ԷԼ ԻՆՉԻ՞ ՀԱՄԱՐ Է ՔԱՐՈԶԱՐՇԱՎ ԱՍՎԱԾԸ



Նյութերը՝
Հայկ
ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

Հետեւելով Նիկոլ Փաշինյանի քարոզարշավին՝ տպավորություն է ստեղծվում, որ նա, իր բոլոր թերություններին վրադիր, նաեւ տառապում է մազոխիզմով: Մազոխիզմն այն է, երբ մարդն ամեն գնով իրեն կտտանքների է ենթարկում եւ դրանից հաճույք ստանում: Փաշինյանը, քաջ գիտակցելով, որ հատկապես մայրաքաղաքում ու Հայ առաքելական եկեղեցու հավատացյալների շրջանում իրեն տանել չեն կարողանում, Ծաղկազարդի տոնին նվիրված պատարագին էր գնացել՝ Սուրբ Աննա եկեղեցում: Նիկոլ Փաշինյանի հանդեպ ատելությունն այնպիսի չափերի է հասել ու այնքան անկառավարելի դարձել, որ 18-ամյա մի երիտասարդ փորձեց հարվածել վերջինիս, ինչի արդյունքում նա ու իր երկվորյակ եղբայրը ձերբակալվեցին: Զրուցել ենք իրավաբան, նախկին պատգամավոր **Գեւորգ Պետրոսյանի** հետ:

- Ինչո՞ւ է Փաշինյանը քայլում Երեւանի փողոցներում՝ տարբեր քաղաքացիների կողմից արժանանալով կշտամբանքի խոսքերի ու քննադատության: Արդյունքում մարդկանց են ձերբակալում: Ի՞նչ եք կարծում՝ այս քայլերով դեպի ո՞ւր է գնում Փաշինյանը:

- Ըստ գործող Սահմանադրության՝ սահմանված է քարոզարշավի հստակ մեկնարկ, սակայն այստեղ կա մի աննորմալ դրույթ, չեմ վարանի ասել այս խոսքը, այն է՝ 19-րդ հոդվածի համաձայն՝ քարոզարշավից դուրս քարոզարշավ անելու համար չկա արգելք: Բա եթե այդպես է, եթե ով երբ ինչ ուզի, կանի, էլ ինչի՞ համար է քարոզարշավ ասվածը, թող ամեն օր մարդիկ ինչ ուզեն, անեն, բայց այդ նույն հոդվածի առաջին մասի համաձայն ասվում է, որ քարոզարշավի մասնակիցների հավասար իրավունքների սկզբունքը պետք է պահպանվի: Իսկ մեզանում դա ապահովված չէ: Նիկոլ Փաշինը՝ Հայաստանում Ադրբեջանի արտակարգ եւ լիազոր դեսպանը, ես նրան այդպես եմ անվանում, ազատության մեջ ինչ ուզում է, անում է, իսկ մնացած թեկնածուները, ովքեր իրենցից բան են ներկայացնում եւ կարող են իսկապես վարչապետ դառնալ, բոլորն անխտիր անազատության մեջ են: Օրինակ՝ Սամվել Կարապետյանի նման մարդուն ինչի՞ համար են փակել: Նա ի՞նչ վատ բան է արել: Երեկ էլ տեսանք, որ նորից ձերբակալություններ եղան: Բոլոր նրանք, ովքեր Փաշինյանի համար վտանգ ու խոչընդոտ են, բանտարկվում են: Նիկոլ Փաշինն այսօր անհավասար քարոզարշավ է իրականացնում, խախտում է Ընտրական օրենսգրքի 19-րդ կետի առաջին մասի պահանջը: Դա հետագայում հիմք է հանդիսանալու, որ ընտրությունների արդյունքները վիճարկվեն, ինչո՞ւ, որովհետեւ նա խախտել է օրենքի պահանջը: Թող լավ ականջին օղ անի: Նա չարաշահում է իր լիազորությունները, սահմանադրական կարգ է տապալում: Մի մարդ, որ հայտարարում է, որ չկան իրեն չենթարկվող դատավորներ, այդ մարդուց ինչ կարելի է սպասել: Երեկ էլ հայտարարեց, որ շնորհակալ է իր կուսակիցներին՝ իրեն վարչապետի պաշտոնում կրկին երաշխավորելու համար: Ի՞նչ է սա նշանակում. նշանակում է, որ ինքն արդեն ընտրությունների արդյունքները որոշել է: Ի՞նչ իրավունք ունի նման հայտարարություն անելու: Այս բոլոր հայտարարությունները փաստում են այն մասին, որ Հայաստանում օրենքը մահացել է: Սրանք՝ բոլորը, փաստեր են, որոնք հատ-հատ պետք է ֆիքսենք եւ ընտրություններից հետո վիճարկենք Սահմանադրական դատարանում:

- Իսկ այն, որ մարդիկ այսքան վատ են ընդունում Փաշինյանին՝ ծաղրում են, վիրավորում, քննադատում, բայց նա շարունակում է մարդկանց մեջ քայլել, իհարկե՝ թիկնապահների ուղեկցությամբ, եւ ձեւացնել, թե ոչինչ էլ չի պատահել:

- Մարդու բարոյականությունը մեծապես պայմանավորված է նրանով, թե ինքն ինչքանով է կարողանում հեռու մնալ իր հետ կապ չունեցող զբաղմունքներից: Նա կասկածելի հոգեվիճակում գտնվող երկոտանի է: Այդ մարդը պատկերացում չունի, թե ինչ պաշտոն է զբաղեցնում: Ալեն Սիմոնյանի նման անգրագետ իրավաբանը պնդում է, որ վարչապետն ինչ ասի, ինքը պետք է անի: Բայց, ըստ օրենքի, Ազգային ժողովը պետք է վերահսկի գործադիրին, մեզանում լրիվ հակառակն է: Հայաստանն իրավական պետություն չէ, Հայաստանը խուժանապետություն է: Ով կասի, թե Հայաստանը ժողովրդավարության բաստիոն է, ես կասեմ՝ Հայաստանը քաղբանտարկյալների բաստիոն է:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԿՐՏՉՅԱՆԻ ՄՈՏ ՑՆՑՈՒՄՆԵՐ ԵՆ՝ ՆՐԱՆ ՉԵՄ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄ

Վաղարշապատի ՏԻՄ ընտրություններում «Հանրապետություն» կուսակցության քաղաքապետի թեկնածու, ՔՊ-ի ու Նիկոլ Փաշինյանի մեծ երկրպագու Հարություն Մկրտչյանը Ֆեյսբուքի իր էջում երեկ անսպասելի գրառում էր արել. «Հարգելի հայրենակիցներ, Վաղարշապատ խոշորացված համայնքի հարգելի համաքաղաքացիներ

Համարում եւ արձանագրում եմ, որ իմ քաղաքական գործունեության կոպտագույն սխալներից մեկը եղել է Վաղարշապատ խոշորացված համայնքի ՏԻՄ ընտրություններում «Հանրապետություն» կուսակցության ցուցակը գլխավորելը, ինչի համար ներողություն եմ խնդրում, քանի որ բախումը գաղափարական,ներքաղաքական եւ արժեքային է, իսկ դա ինձ համար ավելի ցավալի է, քան եթե խնդիրը լիներ անձնական/ներանձնային տիրույթում:

«Հանրապետություն» կուսակցությանը, նրա նախագահին, թիմակիցներին, համակիրներին հորդորում եմ՝ ինձ անգամ չարձագանքել, որեւէ մեկնաբանություն ասվածին չտալ, քանի որ հայ հանրությանն ավելի շատ հետաքրքրում է հետեւյալ հարցի պատասխանը՝ ի՞նչ քաղաքական մոտիվացիա եւ հիմքեր են իրենք՝ արեւմտամետ-լիբերալ ուժ հանդիսանալով ունեցել, որ սույն թվականի մարտի 28-ին քաղաքական համագործակցություն են սկսել հանրությանը գրեթե անծանոթ «Արժանապատվություն» պահպանողական նախաձեռնության հետ, որի նախագահը հանդիսանում է/էր Գագիկ Ծառուկյանի օգնականը (որը հայտնի է իր բելառուսամետ/ռուսամետ քաղաքական հայացքներով), որի նախագահը 2018 թվականի դեկտեմբերին կայացած խորհրդարանական ընտրություններում եղել է ԲՀԿ ռեյտինգային թեկնածուներից մեկը, որի նախագահը հանդիսանում է ԲՀԿ Կենտրոն համայնքի խորհրդի նախկին նախագահը: Ինչպես նաեւ կայացրել եմ ներքին որոշում՝ այսուհետեւ հիմնականում ապավինել իմ ժողովրդի՝ ինձ տված խորհուրդներին ու հորդորներին, որովհետեւ պարզվեց, որ իրենք ճիշտ էին, ես՝ սխալ ...»:

«Արժանապատվություն» նախաձեռնության մասին շատ սուղ տեղեկություններ կան համացանցում, ղեկավարը Ռաֆայել Այվազյանն է, որ ժամանակին ԲՀԿ աշխատակազմի ղեկավարն է եղել, իսկ 2024 թ. փետրվարին անհայտ անձանց կողմից ծեծի էր ենթարկվել. միջադեպի մասին գրվել էր մամուլում: Նախօրեին այս նախաձեռնության ղեկավարն ու Արամ Սարգսյանը հայտարարել են, որ հունիսի 7-ի ընտրություններին ընդառաջ միավորվում են:

«Հանրապետություն» կուսակցության անդամ, Երեւանի ավագանու «Հանրապետություն» խմբակցության ղեկավար **Անի Խաչատրյանին** «Հրապարակը» հարցրեց՝ ի՞նչն է Մկրտչյանի զայրույթի եւ հիասթափության պատճառը: «Հարություն Մկրտչյանի մոտ ցնցումներ են, չգիտեմ ինչ ցնցումներ, բայց «Արժանապատվություն» նախաձեռնությունն իր աջակցությունն է մեզ հայտնել, էդքան բան: Քանի որ նախընտրական փուլ է, ուղղակի իրենց աջակցությունն են հայտնել, ի՞նչ կա այդտեղ: Ցանկացած անհատ, ցանկացած կազմակերպություն մեզ կարող է իր աջակցությունը հայտնել: Ես Հարություն Մկրտչյան չեմ մեկնաբանում, դա անլուրջ գործ է»,- ասաց Խաչատրյանը: Բայց ընդամենը մի քանի ամիս առաջ նա Ձեր քաղաքապետի թեկնածուն էր, որով հիացած էր ողջ «Հանրապետությունը», եւ Դուք անձամբ էիք քարոզարշավին մասնակցում՝ նկատեցինք մենք: «Դա անցյալում էր, այդ ընտրությունները մնացին անցյալում»:

Տավուշցի թամադաները միացել են Փաշինյանի փիառին

Հանդիսավար, հարսանիքների, ծննդյան տարեդարձների, նաեւ տխուր արարողությունների թամադա, Տավուշի Բերդավան գյուղում հյուրատուն աշխատեցնող, վերջերս սկանդալային պատմության մեջ հայտնված եւ ոստիկանություն դիմած Լիանա Զուրաբյանը մարտի 23-ին իր փոքր տղայի՝ Լեւոնի հետ Ֆեյսբուքում եթեր մտնելով՝ հայտարարել էր. «Ուղերձ Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանին: Հարգելի պարոն Փաշինյան, ես, իմ որդին, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության հարյուր հազարավոր գիտակից քաղաքացիներ, խնդրում եւ հորդորում ենք Ձեզ՝ թողնել ժողովրդավարությունը, զերծ մնալով սադրանքներից: Խնայեք Ձեր նյարդերը, Դուք մեզ առողջ եք պետք: Մենք էլ չենք ցանկանում՝ լինի կռիվ, չենք ցանկանում՝ լինի պատերազմ, չենք ուզում, որ նորից զոհվեն մեր հայորդիները: Մենք ուզում ենք ապրել խաղաղ երկրում, խաղաղ երկնքի տակ: Հայաստանի Հանրապետության հասկացող քաղաքացին Ձեր կողքին է»:

Ինչքանո՞վ է օրինական ու բարոյական, որ այս քաղաքական գովազդի մեջ հանդիսավարն օգտագործել է իր փոքրահասակ տղային, թողնենք իր խղճին, բայց ո՞վ է Լ. Զուրաբյանին լիազորել՝ խոսելու հարյուր հազարավոր քաղաքացիների անունից: Լիանա Զուրաբյանը մի անգամ էլ մարտի 25-ին է տեսաուղերձով հանդես եկել՝ «Չքաղաքականացնել» խորագրի ներքո, որտեղ կրկին Փաշինյանի իշխանության գովազդն է արել՝ ասելով, որ աթոռակռիվ է, սակայն ով էլ նստի այդ աթոռին, մարդկանց կյանքում բան չի փոխվելու, կարեւորն այն է, որ երկրում խաղաղություն տիրի: Սա էլ ընտրողներին հիասթափեցնելու համար է արվում՝ որ նրանք չմասնակցեն ԱԺ ընտրություններին, քանի որ, միեւնույն է՝ իրենց կյանքում ոչինչ չի փոխվելու:

Իջեւանցի երիտասարդ հումորիստ, հարսանիքների թամադա Աշոտ Ամիրջանյանն էլ մարտի 29-ին է Ֆեյսբուքում տեսանյութ հրապարակել, որտեղ գովել է պետական աջակցությամբ 16 միլիոն դրամով առանձնատների կառուցման ծրագիրը: Տեսանյութում Ա. Ամիրջանյանն իբր հասարակ գյուղացի է, կիսակառույց տան մոտ հարցազրույց է տալիս լրագրողին, «դժգոհում է», որ այդ ծրագրով տուն սարքելիս ինքը մեջքահան է լինում, սակայն ասում է, որ լավ ծրագիր է, դրանով Տավուշի մարզում 1500 տուն է կառուցվել: Կարելի է մտածել, որ այս թամադաները միաժամանակ ինքնաբուխ են միացել Փաշինյանի իշխանության քարոզչությանը: Բայց եթե հիշենք, որ թամադայի գործը փող ստանալն ու պատվիրատուին գովերգելն է, ամեն ինչ տեղը կընկնի:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ՇԿՈՐՍԻԿ

ՆԻԿՈԼԻՑ ՎԱԽԵՆՈՒՄ ԵՔ՝ ՉԵՔ ԽՈՍՈՒՄ, ԱՐՑԱԽԻ, ՀԱՅ ԳԵՐԻՆԵՐԻ ՄԱՍԻ՞Ն ԻՆՉՈՒ ՉԵՔ ԽՈՍՈՒՄ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը Հայաստանի ազգային ակադեմիական երգչախմբի շենքում՝ Պուշկինի 60 հասցեում, երեկ ներկա է գտնվել ԽՍՀՄ եւ ՀԽՍՀ պետական մրցանակների դափնեկիր, դիրիժոր, Հայաստանի ազգային ակադեմիական երգչախմբի ղեկավար Հովհաննես Չեքիջյանի անվանատախտակի բացման հանդիսավոր արարողությանը: Կառավարության որոշմամբ՝ Հայաստանի ազգային ակադեմիական երգչախումբն էլ անվանակոչվել է Հովհաննես Չեքիջյանի անունով:

Նախքան անվանատախտակի բացումը, 98-ամյա Չեքիջյանը փորձ է արել երգչախմբի հետ, որին ներկա են գտնվել նաեւ Նիկոլ Փաշինյանը, ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը: Վարչապետը շնորհակալություն է հայտնել մաեստրոյին եւ երգչախմբին՝ գործունեության համար. «Հարգելի պարոն Չեքիջյան, հարգելի մաեստրո, իմ խոնարհումը Ձեր առաջ, Ձեր գործունեության առաջ: Մենք շատ ենք խոսում արժեքների եւ արժեքահեն հասարակության մասին, եւ աներկբա է՝ այն արժեքը, որը Դուք ստեղծել եք, վերջին հարյուրամյակի մեր ամենահիշարժան եւ նշանավոր ձեռքբերումներից մեկն է: Եվ պատահական չէ ամենեւին, որ Հայաստանի Հանրապետությունը, ի ճանաչումն այդ վաստակների, Ձեզ շնորհել է ՀՀ ազգային հերոսի կոչում: Միայն մի բանի համար եմ ցավում, որ մենք դեռեւս չենք կարողանում գտնել այն բանաձեւերը, որ այն, ինչ որ Դուք ներկայացնում եք, հասու լինի հնարավորինս շատ մարդկանց»: Ապա նաեւ խոնարհվել է Չեքիջյանի առաջ, նրա ձեռքը սեղմել, սրտանց ժպիտներ են փոխանակել: Սակայն պարզ է, որ այս ամենն արդյունք է այն բանի, որ Չեքիջյանն իշխանամետ հայացքներ ունի՝ եթե նա երբեւէ քննադատած լիներ Փաշինյանին, վերջինս անգամ չէր հիշի նրա գոյության մասին:

Եվ հենց այս օրերին մենք տեսնում ենք, թե ինչպես է 82-ամյա ամերիկացի դերասան Ռոբերտ դե Նիրոն, որը քայլում է մեծ դժվարությամբ, պայքարում ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի դեմ, իսկ պայքարի պատճառն Իրանի դեմ պատերազմն է: Փաստորեն, մեզանում չկան նման դերասաններ, արվեստագետներ, մտավորականներ, որ ոչ թե մի հեռավոր երկրում իրենց իշխանությունների թույլ տված սխալների, այլ հենց մեր երկրում կատարվողի համար պայքարեին: Աժ նախկին պատգամավոր, քաղաքական գործիչ **Նաիրա Զոհրաբյանը** հաճախ է խոսում մտավորականների կռացած, կրավորական կեցվածքի, ստրկացած կարգավիճակի մասին:

Նա մեզ հետ զրույցում ասում է. «Երբ ես խոսում եմ այդ կալիբրի մշակութային գործիչների մասին՝ Հովհաննես Չեքիջյան, Արտավազդ Փելեշյան, Տիգրան Մանսուրյան եւ այլն, որոնց ձայնն աներկբա կարող էր լսելի լինել, օրինակ՝ ռազմագերիների, Արցախի ոչնչացվող ժառանգության հարցում եւ այլն, ինձ ասում են՝ ինչ ես ուզում, ծեր մարդիկ են՝ թող մեռնեն-գնան, պանթեոնում թաղվեն: Այսինքն, ես իրավունք ունեմ եզրակացնելու, որ այս մարդկանց կռիվը պանթեոնում թաղվելն է՝ «երկուսը երեքի վրա» է նրանց պայքարը: Հանուն այդ փոսի, նրանք պատրաստ են բոլոր իշխանությունների համար լաքեյ աշխատել: Ստրասբուրգում մի առիթով ԵԽԽՎ-ում պետք է ընդունվեր սերբիացի կամավոր Մելիսա Մարկովիչի հակահայ բանաձեւը՝ Սարսանգի ջրամբարի հետ կապված: Մեզ հետ միասին, որպեսզի այդ բանաձեւը կյանքի չկոչվի, լոբբինգ էր անում Էմիր Կուստուրիցան՝ լինելով Մարկովիչի հայրենակիցը: Պատկերացնում եք՝ մենք մեր հույսը դրել էինք մի մարդու վրա, որը հայ չէ, եւ նա մեզ հավասար կռիվ տվեց հակահայ բանաձեւի դեմ: Այսօր մենք տեսնում ենք, որ նման կալիբրի մշակութային գործիչներ ունենք, սակայն նրանք զրո են: Ցավոք, ես մտերիմ եմ եղել Արտավազդ Փելեշյանի հետ, նա այսօր մեկ ձայն անգամ չի հանում: Սրանց մշակութային ժառանգությունը պետք է վառել: Չի կարող արվեստագետը լինել հոգուց անջատ: Այս մարդիկ չունեն հոգի, չունեն բարոյականություն, բարոյականությունը չի կարող լինել առանց էմպատիայի, առանց զգացմունքի: Բաքվի բանտում խոշտանգվում են հայ մարդիկ, ովքեր ֆինանսավորել են սրանց նմաններին: Օրինակ՝ Ռուբեն Վարդանյանը, Բակո Սահակյանը, Արայիկ Հարությունյանն այս մարդկանց վրա լիքը փողեր են ծախսել: Սրանց նման անշնորհակալների արվեստը Աստծուց չէ, այլ սատանայից է: Սրանց մշակույթը պետք է մերժվի: Ոչինչ չունեն կորցնելու, ֆինանսապես անկախ են, չեն նայում իշխանությունների կոպեկին, բայց այնքան անբարոյական են, այնքան հեռու են հայ լինելուց, որ գլուխները ավազից չեն հանում: Սրանց մեջ սովետից մնացած վախն է ապրում: Անգամ չեմ ուզում սրանց անվանել մտավորական: Սովետիզմից մնացած վախվորած սուբյեկտներն ինչ մտավորական: Սրանք միշտ վախենում են օրվա իշխանությունից, իսկ արվեստագետը չի կարող լինել վախեցած: Այն արվեստը, որ ստեղծել են, սատանայական է: Չեմ հավատում, որ նման ֆիլմեր նկարած վարպետ Արտավազդ Փելեշյանը կարող է լինել այսքան ձայնազուրկ եւ կարող է այսքան լռել: Մեր պետականությունը կանգնած է կորստի վտանգի առաջ: Լավ, Նիկոլից վախենում եք, չեք ուզում մտնել ներքաղաքական դեբատի մեջ, լավ, բա Արցախի մշակութային ժառանգության, հայ ռազմագերիների եւ մյուս թեմաների մասին ինչո՞ւ եք վախենում խոսել: Տարրական շնորհակալության զգացում չունեցող մարդկանց մասին ենք մենք խոսում: Ամոթ, հազար ամոթ»:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԸՆՏՐԱՑՈՒՅՑԱԿԸ ՄԱՏՆՈՒՄ Է ՔՊ-Ի ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ 8 ՏԱՐՎԱ ԴԵԳՐԱԴԱՑԻԱՆ

Նիկոլ Փաշինյանի առաջադրած «Քաղպայմանագրի» նախընտրական ցուցակի առաջին հիսունյակն արդեն ձեւավորված է: Ուրբաթ-շաբաթ օրերին ՔՊ ներկուսակցական ընտրությունների երկրորդ փուլով իշխող կուսակցությունը նաեւ վարչապետի թեկնածու ընտրեց, թեեւ ոչ ոք չէր կասկածում, որ դա լինելու է Նիկոլ Փաշինյանը: Նա ստացել է 933 ձայն: ՔՊ ներքին ընտրություններին մասնակցող 8 հոգի, այնուամենայնիվ, նրան ձայն չի տվել՝ արտահայտելով հայ հասարակության մեծ մասի վերաբերմունքը Փաշինյանի նկատմամբ: Առաջին փուլի քվեարկության ժամանակ 38 հոգի նրան ձայն չէր տվել, ինչը բուռն քննարկումների առիթ դարձավ: Ըստ ամենայնի, ՔՊ-ում դրանից «հետեւություններ» էին արել՝ շարքային ՔՊ-ականները երեւի վախեցել են, որ այս անգամ դեմ քվեարկելը Փաշինյանն իրենց չի ների:

Այսպիսով՝ իշխանականների ներկուսակցական պայքարը հետաքրքիր արդյունքներ է գրանցել: Ռեյտինգային ցանկից պարզ է դառնում, թե ով ինչ կշիռ ունի թիմի ներսում, ում են ավելի շատ ընդունում, ում՝ ոչ այնքան, եւ ինչ է խրախուսում ու գնահատում ինքը՝ «առաջնորդը», եւ ըստ այս ռեյտինգների էլ հետագայում այս մարդիկ, եթե ՔՊ-ն վերընտրվի, տեղ կզբաղեցնեն իշխանական վերնախավում: Ավելի ճիշտ՝ Նիկոլ Փաշինյանն այս ցուցակը կարող է օգտագործել ինչ-որ մարդկանց բարձր պաշտոնից զրկելու, որոշներին խրախուսելու, առաջ տանելու իմաստով, եթե, իհարկե, ՔՊ-ականների երազանքը կատարվի, եւ կարողանան վերարտադրվել:

ՔՊ-ականների քվեարկության արդյունքները նաեւ վկայությունն են այն բանի, թե ինչ արժեհամակարգ է գործում պետությունը կառավարող քաղաքական ուժի ներսում, մարդկային որ հատկանիշներն են խրախուսվում: Չնայած ՔՊ-ական լինելն արդեն իսկ դիագնոզ է, բայց արձանագրենք, որ առաջին տասնյակում տեղ են զբաղեցրել մարդիկ, որոնք աչքի են ընկնում սանձարձակ, անհավասարակշիռ, անզուսպ ու անդաստիարակ պահվածքով, ընդդիմախոսների նկատմամբ լկտի լեքսիկոնով:

«Լավագույն տասնյակում» Փաշինյանին հաջորդում են Արարատ Միրզոյանը, որը, ի դեպ, առաջին փուլից հետո երկու հորիզոնականով բարելավել է արդյունքները՝ հետեւում է թողել պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանին, թերեւս նաեւ վերջին շրջանում «նիկոլավարի» պահվածքի շնորհիվ, որով երբեմնի զուսպ ՔՊ-ականն առաջներում առանձնանում էր թիմից, իսկ հիմա որդեգրել է թիմային պահվածքը: Գեւորգ Պապոյանը, որն առաջին փուլից հետո երրորդն էր, այժմ չորրորդն է: Վերջին շաբաթներին իր հիստերիկ պահվածքով աչքի ընկած Ռուբեն Ռուբինյանին էլ է թիմն առաջ մղել. նա մեկ հորիզոնական վեր է բարձրացել՝ հինգերորդ տեղում է: Նախորդ ընտրությունից հետո Վահագն Ալեքսանյանն էր հինգերորդը, այժմ յոթերորդն է, իսկ վեցերորդում Անահիտ Ավանեսյանն է, որը, ըստ ՔՊ-ականների, այս ընտրությունների հայտնությունն է. որեւէ մեկի մտքով չի անցել, որ թիմում նա ամենաընդունելի կինը կլինի: Միակ հասկանալի բացատրությունն այն է, որ առողջապահության ոլորտի հետ շատ ՔՊ-ականներ են գործ ունեցել, եւ նախարարը կարողացել է ամեն մեկին մի ձեւով լավություն անել՝ առաջին փուլից հետո նա 13-րդ հորիզոնականից բարձրացել է 6-րդ:

Լավագույն տասնյակում են նաեւ վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանը, Հայկ Կոնջորյանը, տասնյակը եզրափակում է Արսեն Թորոսյանը: Երկրորդ փուլի ամենամեծ անակնկալը թիմում համարում են Ալեն Սիմոնյանի՝ տասնյակից դուրս մղվելը: Ոմանք Սիմոնյանի երգն արդեն երգված են համարում եւ կարծում են, որ նա այլեւս չի կարող հավակնել ներկայիս պաշտոնին, չնայած ներկուսակցական քարոզարշավի ողջ ընթացքում նա Փաշինյանի կողքին էր, «ուրախ ավտոբուսում» նրա կողքը նստած՝ ուտում-խմում էր, պարբերաբար էլ նրա հակահայ մտքերն էր տիրաժավորում, բայց դա, փաստորեն, նրան չի օգնել:

Պատահական չէ, որ Լիլիթ Մակունցն է իր դիրքերը բարելավել. եթե առաջին փուլից հետո նա 23-րդն էր, այժմ՝ 17-ը, ոմանք վստահ են, որ նրա համար Փաշինյանը ջանք չի խնայել, քանի որ հենց Մակունցին է դիտարկում Աժ նախագահի պաշտոնում: Մյուսների դեպքում էական փոփոխություններ չեն եղել, բացի նրանից, որ Տիգրան Ավինյանը 22-րդ հորիզոնականից իջել է 29-ը, Սոնա Ղազարյանը մոտ 20 հորիզոնականով բարելավել է դիրքերը: Ամենաքիչ ձայն հավաքած թեկնածուն Վաղարշակ Հակոբյանն է, որը Խաչատուր Սուքիասյանի մտերիմն է եւ, ըստ լուրերի, Ծաղկաձորում բիզնեսներ ունի ու ի սկզբանե այնքան էլ մեծ ցանկություն չուներ առաջադրվելու, սակայն, ասում են, վախենալով Փաշինյանի պատժից, առաջադրվել է:

Ի դեպ, իշխող թիմի ներսում վերջին շրջանում խուճապային տրամադրություններ կան, ոմանց համոզմամբ՝ եթե ֆորսմաժորներ չլինեն, եւ Արեւմուտքը Փաշինյանի ընտրական եւ նախընտրական պլանների իրականացման համար ավելի գործուն միջոցներ չձեռնարկի, ապա, մեծ հավանականությամբ, այս ցանկից միայն 30 հոգի շանս ունի՝ խորհրդարան մտնելու:

Նկատենք նաեւ, որ 8 տարի իշխանություն լինելուց հետո, ենթադրվում էր, որ նոր մարդիկ կհայտնվեն ՔՊ ցանկում, բայց 2026-ի ցանկը 2018-ի զտված ցանկն է՝ շատ ավելի աղքատիկ ու անհաջող, քան իշխանափոխությունից հետո էր:



«Քաղաքացիական պայմանագիր» 2026թ. Աժ ընտրությունների թ
ընտրության քվեարկ

1	Նիկոլայի Փաշինյան Գոգիկի	777	26	
2	Արմենակի Սեմերճյան Թորոսի	780	27	
3	Ալինա Գեղամի Կիրմեն	502	28	
4	Բաղդասարի Մերուժ Պապայի	351	29	
5	Բաղդասարի Լուսինե Հասգիի	364	30	
6	Բաղդասարի Ռաֆայելի Վազգենակի	498	31	
7	Բաղդասարյան Նարեկի Գրիգի	490	32	
8	Գաբրիելյան Սիսակ Կիրենի	509	33	
9	Գաբրիելյան Վիշեն Հազարեի	580	34	
10	Գալան Արքուհի Գուրգենովնա	682	35	
11	Գասպարյան Գայանեին Սնայանտ	483	36	
12	Գրիգորյան Լաուրեն Գարեգինի	443	37	
13	Դանիելյան Արփենիկ Գրիգորի	409	38	
14	Երզնկան Արմեն Ալբերտ	548	39	
15	Թորոսյան Արսեն Գեղարդի	745	40	
16	Թոնոյան Բաբկեն Էդգարի	500	41	
17	Լևոնյան Լևոն Պողոսի	499	42	
18	Խաչատրյան Արքեն Էդգարեի	604	43	
19	Խուդավերդի Դավիթ Գուրգենովիչ	696	44	
20	Կոնջորյան Հայկ Արտեմի	747	45	
21	Հակոբյան Դավիթ Արտեմի	613	46	
22	Հակոբյան Վաղարշակ Սուքի	318	47	
23	Հարությունյան Մխիթար Բոսկիի	458	48	
24	Հարությունյան Արայիկ Էդուարդի	766	49	
25	Հարությունյան Քնարիկ Գագիկի	451	50	

Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՆ ԺԱՄԱՆԵԼՈՒ ՈՉ ՄԻԱՅՆ ՆՐԱՆՔ, ՈՎՔԵՐ ԺԱՄԱՆԱԿԻՆ ԼՔԵԼ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ, ԱՅԼԵՎ՝ ՆՐԱՆՑ ԺԱՌԱՆԳՆԵՐԸ

Հարցազրույց իրավապաշտպան, ՀՀ առաջին ՄԻՊ ***Լարիսա Ալավերդյանի*** *հետ*

- Ադրբեջանը պետական քաղաքականություն է դարձրել փախստականների վերադարձն «Արեւմտյան Ադրբեջան», այսինքն՝ Հայաստան, որն իբր իրենց պատմական հայրենիքն է: Մեր իշխանությունները չունեն հակադարձելու ոչինչ՝ Հայաստանի տարածքային ամբողջականությանը սպառնացող ադրբեջանական այդ քաղաքականությանը: Լռելով համաձայն են որպես սպասարկու կողմ:

- Այսօր մենք ունենք խնդիր: Ադրբեջանն ասում է՝ մենք վերադառնում ենք, որովհետեւ ունենք իրավունք՝ փախստականի կարգավիճակ: Ընդ որում, իրավունք՝ ոչ միայն նրանց համար, ովքեր ժամանակին լքել են Հայաստանը, այլ նաեւ՝ նրանց ժառանգների: Եվ պատահական չէ, որ նրանք հիմա փաստաթղթեր են բաժանում անգամ երեխաներին: Իսկ ո՞ւր են նրանք վերադառնում: Եթե մենք ուզում ենք հարցը ճիշտ դնել՝ չխախտելով միջազգային իրավունքը, պետք է հստակեցնենք՝ ո՞ւր եք դուք վերադառնում, չէ՞ որ փոխանակել կամ վաճառել եք ձեր բնակարաններն այն ժամանակ: Եթե նրանց նկրտումները տարածվում են Հայաստանի վրա, որ իրենց նախկին հայրենիքն է իբր, մենք պետք է նրանց մերժենք ամբողջովին, որովհետեւ դա ուժի սպառնալիք է ՀՀ տարածքային ամբողջականության նկատմամբ: Իսկ Հայաստանը, ստանալով այդ ազդանշանը, արդյո՞ք չպետք է դնի հարցը, որ կես միլիոնից ավելի հայեր բռնի կերպով են տեղահանվել Ադրբեջանից: Հայերը ե՞ւս վերադառնում են: Սումգայիթում տեղի է ունենցել հայերի սպանդ, բռնի տեղահանություն: Դատեր են եղել, որ Սումգայիթում կատարվածը, եթե ոչ ամբողջովին ուղղորդված, ապա համաձայնեցված է եղել ադրբեջանական իշխանությունների հետ: Իսկ Ադրբեջանն ասում է, որ հայերը չեն վերադառնալու. այդ դեպքում ի՞նչ փոխհատուցում է ստանալու Սումգայիթի բռնագաղթած հայը: Հայաստանը երբեւիցե պաշտոնապես այդ հարցը դրե՞լ է այս վերջին տարիներին, երբ նրանք անընդհատ թմբկահարում են իրենց վերադարձը: Եթե Հայաստանը լռում է, ստացվում է, որ ընդհանրապես բռնի տեղահանություններ չեն եղել Ադրբեջանի կողմից: Հայաստանի օրվա վարչակազմը ոչ միայն քողարկում, այլեւ արդարացնում է Ադրբեջանի ցեղասպանական քաղաքականության շարունակությունը: Եթե ՀՀ օրվա վարչակազմը, որ իրեն իշխանություն է զգում, դա չի ասում, դրան չի ընդդիմանում, նշանակում է, որ նա ուղղակի կամ անուղղակի մասնակից է հայերի հանդեպ ցեղասպանական քաղաքականության շարունակությանը:

- Աժ նախագահն ասում է, որ ադրբեջանցիները պետք է գան եւ ապրեն Հայաստանում՝ այնպես, ինչպես հայերն են ապրում Վրաստանում: Բայց չի ասում, որ հայերն էլ կգնան եւ կապրեն Ադրբեջանում:

- Եթե մենք ընդունում ենք խնդրի միայն այն մասը, որ ադրբեջանցիները պետք է գան եւ ապրեն Հայաստանում, ստացվում է, որ հայերին բռնի չեն տեղահանել Սումգայիթից, Բաքվից, Գանձակից, որ Ադրբեջանը ցեղասպանական գործողություններ չի իրականացրել Արցախի Հանրապետությունում: Այսինքն, այս վարչակարգն ամբողջովին արդարացնում, սպասարկում է նրանց ցեղասպանական նկրտումները: Ադրբեջանցիները չեն ասում, որ մենք վերադառնալու ենք մեր նախկին տները, նրանք ասում են՝ վերադառնում ենք մեր հայրենիքը, պատմական հողերը, եւ դա կոչվում է «Արեւմտյան Ադրբեջան»:

- Կարո՞ղ ենք ասել, որ սա հետո իրականություն է դառնալու՝ նկատի ունենալով ադրբեջանցիների հետեւողական գործողությունները, թե՞ հայավարի ծաղրենք ու ծիծաղենք, ինչպես նախկին իրադարձություններից առաջ էր:

- Մենք մինչ օրս տեսել ենք, որ այն, ինչ ասվում է Ադրբեջանի կողմից, թեպետ Հայաստանում շատ փորձագետներ ասում են, որ դա միայն հայտարարություն է, դեռ չի եղել մի բան, որ չի իրականացվել: Ինչո՞ւ: Դա պատահականությո՞ւն է, դեպքերի համընկնո՞ւմ է՝ ո՛չ: Հարցն այն է, որ Թուրքիան եւ իր ստեղծած առաջին թուրքական պետությունն Օսմանյան կայսրությունից դուրս տարածքների վրա է, դա Հյուսիսային Կիպրոսը չէ, դա Ադրբեջանն է՝ որպես թուրքական երկրորդ պետություն: Եվ պատահական չէ, որ ասում են՝ մեկ ազգ՝ երկու պետություն: Այսինքն Թուրքիան, որն ունի երկարաժամկետ ծրագիր՝ 500 տարվա, միջնաժամկետ՝ 300 տարվա, եւ կարճաժամկետ՝ 100 տարվա համար, այն, ինչ չի հասցրել ամբողջական անել 1920-ականներին, իրականացնում է 2020-ականներին:

- Կա՞ն կոնկրետ ուղիներ, որոնցով հնարավոր է կասեցնել այս ընթացքը եւ պաշտպանել մեր արդար իրավունքները:

- Մենք տեսնում ենք, որ այս վարչակարգն իր հայտարարություններով, իր սխալ գործողություններով եւ անգործությամբ ոտնահարում է թե՛ տուժած, թե՛ ցեղասպանությունից մազապուրծ հայերի իրավունքները: Բայց պարտավոր է պաշտպանել, որը նշանակում է երկու հնարավորություն: Առաջինը. հասարակության մակարդակով պետք է լինի միասնական մի կենտրոն, որը ներկայացնի Հայաստանի իսկական շահերը: Իսկ երկրորդն Արցախի Հանրապետությունն է, որը, չլինելով միջազգայնորեն ճանաչված պետություն, բոլոր դեպքերում միջազգային իրավական սուբյեկտության մասնավոր կրող է: Եթե ինքը մինչ օրս չի օգտվել դրանից, ապա հիմա պիտի օգտվի, որովհետեւ մայիսի վերջին ավարտվում է Արցախի Հանրապետության Ազգային ժողովի ժամկետը, իսկ դրանից հետո ինչպե՞ս է շարունակելու Արցախի Հանրապետության միջազգային սուբյեկտությունը, մեծ հարցականի տակ է: Այսինքն, ինչ-որ մի սուբյեկտ պետք է ի հայտ գա: Օրինակ, արտասահմանում Արեւմտյան Հայաստանի հայերը ստեղծել են Հայ դատը, որը ներկայացնում է Արեւմտյան Հայաստանում ցեղասպանված եւ փրկված մարդկանց շահերը: Հիմա պետք է այստեղ այդպիսի մի կենտրոն լինի, որ ներկայացնի Արեւելյան Հայաստանի, այդ թվում՝ Արցախի շահերը: Բայց դա չկա: Անշուշտ, մենք պետք է դատապարտենք Ադրբեջանին եւ Թուրքիային՝ իրենց ագրեսիվ քաղաքականության համար: Բայց մենք պետք է մեր անգործության հարցն էլ բարձրացնենք ոչ միայն ՀՀ օրվա վարչակազմի մասով, այլեւ՝ ակտիվ խավի, որ պետք է ստեղծի ինչ-որ կենտրոն, որը կներկայացնի հայերի շահերը՝ օրվա վտանգներից փրկվելու համար: Ի վերջո, ցեղասպանությունը, որը տեղի է ունեցել Արցախում, ավելի հիմքեր կամ պատճառներ չուներ, քան որ նույնն անի Ալիեւը Հայաստանի նկատմամբ: Ինչ է, Հայաստանի իրավական հիմքերն ավելի՞ն են, քան Արցախինը: Ո՛չ:

- Իսկ սրանք ասում են՝ գիտակցաբար գնացինք զոհաբերության, որպեսզի Հայաստանն անկախություն ձեռք բերի:

- Դամոկլյան այդ սուրը կախված է նաեւ Հայաստանի վրա: Էլի եմ ասում՝ Արցախի նկատմամբ Ադրբեջանի բոլոր նկրտումները եւ հանցավոր գործողությունները չեն արժանացել ՀՀ օրվա վարչակազմի որեւէ իրավական եւ քաղաքական գնահատականին: Իսկ լուռ համաձայնությունը նշանակում է, որ հիմք են ստեղծում Ադրբեջանի կողմից անպատիժ գործողությունների համար՝ հայերի եւ Հայաստանի նկատմամբ: Դա ցեղասպանություն է, ոչ թե այստեղ կամ այնտեղ ապրող հայերի, այլ ցեղասպանություն է ընդհանրապես հայերի նկատմամբ: Այդ առումով, այո, վտանգն ուղղակի կախված է օդում՝ մեր գլխի վրա: Ես չեմ սիրում խոսել այդպիսի կատաստրոֆիկ սցենարների մասին, եթե չեմ նշում դրանցից փրկվելու ճանապարհները: Դրա համար էլ օրինակ եմ բերում դրսում ստեղծված Հայ դատը, որը ճանաչված է որպես արեւմտահայերի շահերը ներկայացնող կառույց: Իսկ մենք ոչ միայն ներսում չունենք այդպիսի մի կառույց, այլեւ ունենք ճիշտ հակառակ պատկերը. Հայաստանի օրվա վարչակազմն ամբողջովին քողարկում է սպառնալիքը եւ դրանով սպասարկում է թուրք-ադրբեջանական ցեղասպան քաղաքականությունը:

- Փաստորեն, եթե սրանք վերարտադրվեն հունիսի 7-ին, անխուսափելի՞ է դառնում այդ կատաստրոֆիկ սցենարի իրականացումը:

- Այո, դա իրականանալու է: Երկու բան կա, որ ադրբեջանցիները գիտեն, որն իրենք ե՛ւ գրավոր, ե՛ւ բանավոր արտահայտում են: Ասում են՝ եթե հանկարծ մի վտանգ զգանք ադրբեջանցիների նկատմամբ, որոնք վերադարձել են, մենք պարտավոր ենք մտցնել մեր պաշտպանության ուժերը, իսկ թե ինչպես՝ մենք լավ գիտենք: Դեռ 1920թ. Թուրքիան հստակեցրել է, որ հենց այդ պատրվակով իրենք պետք է ամբողջ Հայաստանը գրավեն: Պետք է հիշեցնեմ, որ 1919թ. Թուրքիայի արտգործնախարարն Արեւելյան ճակատ ուղարկած հեռագրում նշում է, որ շարունակելով խաբել հայերին եւ մնացած եվրոպացիներին՝ մենք չպետք է մոռանանք մեր նպատակը, այն է՝ ոչնչացնել հայերին ոչ միայն պետականորեն, այլեւ՝ ֆիզիկապես: Իսկ փոխվե՞լ է այդ ծրագիրը: Ո՛չ: Մեծ Թուրանի խնդիրն ի՞նչ է՝ թաքո՞ւն է պահվում: Ո՛չ:

Մենք պիտի հստակեցնենք, լինի դա Թրամփի... ի՞նչ է դա կոչվում՝ այդ ծիծաղելի ու ամոթալի ճանապարհը, որ նման է 17-18-րդ դդ. գաղութատիրական ոճին, որը մեզ այսօր մատուցվում է Թրամփի կողմից եւ ընդունվում գրեթե երջանկությամբ, ուղղակի ամոթ է: Անունն ինչ ուզում եք, դրեք, միեւնույն է, դա բերում է մի բանի՝ Հայաստանը դառնում է անկլավ Ադրբեջանի ներսում: Իսկ դրանից հետո պետականության եւ մնացածի կորուստն ընդամենը տեխնիկայի հարց է: Եթե Թրամփը թույլ է տալիս Իրանի նկատմամբ ռազմական գործողություններ, որն ամբողջովին ոտքի տակ է գցում միջազգային իրավունքը, եւ հավանում է Ալիեւին նույն ոճի համար, մենք պետք է հասկանանք, որ հույս դնել միջազգային իրավունքի վրա, թե մեզ պետք է օգնի, անհեթեթ է: Ընդ որում, մեղմ են հասնելու այդ բանին: Ինչպես այդ՝ միջազգային հանցագործ Ալիեւն է ասում՝ իրենք վերադառնալու են ավտոմեքենաներով, ոչ թե՝ տանկերով: Փաստորեն, նա իրականացնում է այն ռազմավարության նպատակները, որոնք մեկնարկել են դեռ 100 տարի առաջ: Իսկ երբ են դրանք իրականացվում՝ երբ ստեղծվում են համապատասխան պայմաններ: Եվ այդ պայմանների ստեղծման մեջ Հայաստանի օրվա իշխանությունն իր լուման գերադասում է ազգային շահից: Եթե մեր իշխանությունը 2022թ. հոկտեմբերի 6-ին Լեռնային Ղարաբաղը ճանաչում է Ադրբեջանի կազմում, նա դրանով քաղաքական լուծում է տալիս: Ասում է, որ նոր իրավիճակում քաղաքական վեճ է, ես էլ բանակցային կողմն եմ: Ինքն իրեն ոչ միայն բանակցային կողմի տեղ է դրել, այլեւ կոնֆլիկտի կողմ է հանդես գալիս:

Երբ ինքը 2020թ. նոյեմբերի 9-ին ստորագրում է մի փաստաթուղթ, որ հիմա հանձնում է այս տարածքը, 15 օրից՝ մյուս տարածքը եւ այլն, նա իր վրա վերցնում է այնպիսի մի դերակատարում, որով ընդունում է, թե մինչ այդ Հայաստանն օկուպացրել է այդ տարածքները: Ստացվում է, որ ազգային ազատագրական պայքար չի եղել եւ ոչ էլ այն գործընթացը, որի համաձայն, ի վերջո, միջազգային հանրությունը որոշել է խաղաղ ճանապարհներով լուծում տալ խնդրին: Իսկ վերջին խոսքը պատկանում էր Արցախի բնակիչներին: Ինքն այդ վերջին խոսքն էլ է յուրացրել: Ինչպես յուրացրել է Հայաստանում իշխանության բոլոր թեւերը, նույնկերպ էլ յուրացրել է արցախցիների ձայնը:

Հուսիկ Արա

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

ՔՊ-Ի ԱՌԱՋԻՆ 50 ՀՈԳՈՒ ՑՈՒՑԱԿԸ ՔՆՆՉԱԿԱՆՈ՞Ւ

Փաշինյանը, այո, ամեն ինչ փչացրեց… Հասարակություն, պետություն, անկախություն… Ինչքա՜ն հող տվեց, զոհեր, քանի՜ հազար ընտանիք թողեց անտուն-անօթեւան: Կրթություն, գիտություն, մշակույթ, տնտեսություն… Որ կողմը նայում ես, նույն բանն է՝ Նիկոլն է անցել այստեղով, նրա ձեռագիրն է՝ փչացրել է, քանդել, ավերել, արյուն է ամենուր: Դավաճան էլ որ ասում ես՝ նեղվում է, իրեն պատեպատ տալիս: Բա ի՞նչ ասեմ, ի՞նչ անուն տամ… Հայ մարդը Հայաստանի ու հայերի հետ այսպես կվարվե՞ր: Ժողովրդի կեսը կեսին չի բարեւում նրա պատճառով: Մարդը մարդուն գայլ է դարձրել, ի՞նչ ասեմ… 100 տարով հային հետ գցեց մարդկության պատմությունից: Ոչխարն էդ գործը չէր անի, ինչ որ Նիկոլն ու իր անգաղափար հոտն արեց:

Էդ կրծքանշանները, որ բաժանում է, լավ է: Հիմա գոնե հստակ կլինի՝ ով է Նիկոլ, ով՝ չէ, ով է պարտության սիմվոլ, ով՝ չէ, ով է կապիտուլյանտ, ով՝ չէ, ով է պատրաստ մեր հերոսների արյան վրա բեմադրվող այս խեղկատակությունը հանդուրժել, ով՝ չէ: Արա, ՔՊ, իմացեք, ով էս նշանով դուրս եկավ փողոց, ուրեմն հայ չէ, ուրեմն դավաճան է, հողատու է, կապիտուլյանտ է: Ու ձեր բախտից է, որ Երեւանի աղբարկղերը բավականին տարողունակ են, որպեսզի դրանց մեջ 2-3 ՔՊ-շնիկ կարողանան կոմֆորտ տեղավորվել: Վախեցնելու համար չեմ ասում, պարզապես նախադեպեր կան: Այս պահին ձեզնից ընդամենը պահանջվում է հրաժարվել Հայաստանի թերմացք հիշեցնող այդ հիմար քարտեզից ու մեկ էլ հայտարարել (չէ՞ որ դուք թափանցիկ եք աշխատում), թե ինչ կազմակերպություն է շահել այդ քարտեզի տենդերը, ինչքան եք ծախսել, մեկ անձից գնման եղանակո՞վ եք ձեռք բերել, թե՞ ներկրել եք «բարեկամ» Ադրբեջանից: Բայց ինչ էլ լինի՝ հրաժարվեք, դեն նետեք այդ խայտառակությունը, քանի դեռ այն չի հայտնվել հայ զինվորի ու հայ ոստիկանի համազգեստին:

Արդեն կասկած չկա, որ առաջիկա ընտրություններով ՔՊ-ն ռադ է լինելու մեր կյանքից: Ո՛չ ասելիք ունի այլեւս, ո՛չ՝ անելիք: Մնացել է էն տգետ մասսային մի թեթեւ հասկացնել այս ամենը, եւ ՔՊ-ն, ամենայն հավանականությամբ, ԱԺ անցողիկ շեմն էլ չի հաղթահարի, իսկ Նիկոլի առաջնորդությամբ՝ առավել եւս: Ընտրությունների վերջնական արդյունքների հրապարակման հաջորդ իսկ օրը բոլորը նախնական կալանքի են առնվելու կամ, «բրասլետները» ոտքերին, հնարավորություն չեն ունենալու լքել ննջարանի տարածքը, որ գոնե զուգարան գնան: Սա զուտ ցանկություն չէ: Դա են պահանջում արդարությունն ու արդարադատությունը: Պիտի գնան, դայլայլեն քննիչների մոտ, պատմեն ամեն ինչ ու հիմնավոր «նստեն»: Այլ բան հունիսի 8-ից հետո չպետք է լինի:

Բոլորս տեսանք, թե ինչ տեղի ունեցավ Ծաղկազարդին Սուրբ Աննա եկեղեցում: Դա ահազանգ էր այն մասին, որ մենք, որպես ազգ ու ժողովուրդ, գտնվում ենք կործանման եզրին ու կգլորվենք անդունդը, եթե առաջիկա ընտրություններում սրանք կարողանան սողոսկել ԱԺ կամ, որ ավելի սարսափելի է, սահմանադրական մեծամասնություն ստանալ: Հետընտրական շրջանն ինձ պատկերանում է երկու ձեւով՝ կամ մենք նրանց կտանենք դատախազի մոտ, կամ նրանք մեզ՝ դժոխք: Չկա երրորդ ճանապարհ: Կարծում եմ՝ իրենց ապագան ճիշտ այդկերպ են պատկերացնում նաեւ ՔՊ-շնիկները: Հակառակ պարագայում հայտնի «Նազարը» միտումնավոր չէր հարամի Ծաղկազարդը, չէր մխրճվի հավատացյալ ժողովրդի մեջ, հատուկ հրմշտոց չէր սարքի, հետո էլ մի փոքրիկ միջադեպից չէր ճողոպրի: Ի՞նչ տեսավ նա այն երիտասարդի աչքերի մեջ, որն իրեն ասաց՝ «ինձ տենց չնայես»: Նա տեսավ իր ողջ ներքին դատարկությունը, իր կառավարման տարիների ողջ սնանկությունը, հասկացավ, որ դա վերջն է, որ դանակը հասցրել է ոսկորին, եւ, ամենակարեւորը՝ որ 8 տարի շարունակ իր էյֆորիկ ընտրազանգվածը գոնե մեկ մարդով չի կարողացել ավելացնել ու մի բան էլ մսխել է ունեցած-չունեցածը: Երիտասարդն այդ բառերն արտասանել էր ուղիղ նրա աչքերի մեջ նայելով, կարճ եւ հատու: Նրա առջեւ իր պահանջների մեջ շշկռված մի պապիկ չէր, որ վրան ճվճվար, խաբեր, միայնակ կին չէր երեխայի հետ, որ ներսի թույնը դուրս տար… Մի ջահել տղա էր՝ թիկունքին եկեղեցում հավաքված բազմությունը: Բա թող խոսեր, Ալենի չափ չկա՞ր, որ չանա-չանա վիճեր, հայհոյեր, թքեր, գործ տար… Չէ, ինքը թռավ, ու երբ արդեն անվտանգ տարածքում էր, ոստիկաններին ուղարկեց տղային (տղաներին) բռնելու՝ մոռանալով, որ մինչ այդ «կարգադրել» էր՝ «տղային թողնել իր տեղում»: Այդ մարդը՝ պետության ղեկավարը, այլեւս չի գիտակցում, թե ինչ է անում: Հասկացանք՝ շատ էր վախեցել, իսկ մի՞թե դա հիմք էր, որ ոստիկանությանն էլ մինչեւ վերջ մունդռեր:

ՀԳ. *Այս միջադեպի մասին ՆԳՆ-ի հայտարարությունը կարդացե՞լ ես, պարոն Փաշինյան: Իզուր, վերցրու եւ կարդա աշխատակազմիդ հորինած անգրագիտությունը, թե բա՝ երիտասարդը եկեղեցում խոչընդոտել է վարչապետի քաղաքական գործունեությունը… Էշություն… Ու «սենց» էլ գնում եք ընտրությունների: Թե բա՝ ՔՊ-ի ցուցակի առաջին 50 հոգին հայտնի են… Շատ լավ է: Էդ ցուցակը նույնությամբ փոխանցեք Քննչական, որ հունիսի 8-ից հետո բոլորիդ հերթով կանչեն:*

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

ՓԱՇԻՆՅԱՆԱԿԱՆ ՌԵԺԻՄԻՑ ԱԶԱՏՎԵԼԸ ԴԱՐՁԵԼ Է ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐ

Ամերիկյան մեր աղբյուրը տեղեկացնում է, որ օրերս Լոս Անջելեսում տեղի է ունեցել մարդաշատ մի հավաք, որին մասնակցել են տեղի հայ համայնքում ազդեցություն եւ կշիռ ունեցող մարդիկ, գործարարներ, մտավորականներ, հասարակական գործիչներ՝ 200-250 մարդ: Հավաքի ժամանակ քննարկվել է Հայաստանում ստեղծված վիճակը, առաջիկա խորհրդարանական ընտրությունները եւ հայ համայնքի դիրքորոշումն այդ ընտրություններում: Հանդիպման գրեթե բոլոր մասնակիցները համակարծիք են եղել մի հարցում. Հայաստանի գործող իշխանությունը վտանգի տակ է դրել ոչ միայն Հայաստանի Հանրապետության գոյությունը, այլեւ հայ ազգի ինքնությունն ու միասնականությունը: Քննարկման հիմնական թեման եղել է, թե ինչպես ԱՄՆ-ում բնակվող հայերը կարող են օգնել հայաստանցիներին՝ առաջիկա խորհրդարանական ընտրությունների միջոցով ազատվելու գործող ռեժիմից: Հիմնական տեսակետն այն է եղել, որ նրանք, ովքեր ունեն Հայաստանի քաղաքացիություն եւ ֆինանսական հնարավորություններ, ցանկալի է, որ քվեարկության օրը լինեն Հայաստանում եւ իրենց քվեարկությամբ օժանդակեն ռեժիմի հեռացմանը, մյուսները դա անեն իրենց ազգականների եւ հարազատների միջոցով, նրանց հորդորեն՝ անպայման մասնակցել ընտրություններին եւ թույլ չտալ ռեժիմի վերարտադրությունը: Ըստ մեր աղբյուրի, նման հանդիպում- քննարկումներ ավելի փոքր մասշտաբով տեղի են ունենում գրեթե ամեն շաբաթ, իսկ ընտրությունների մոտենալուն զուգահեռ հնարավոր է, որ լինեն նաեւ հրապարակային կոչ եւ հորդոր՝ ուղղված համայնքի հայությանը:

Փաշինյանին կից արտաքին հետախուզության ծառայությունն ԱՄՆ-ում կամ Եվրոպայում տեղի ունեցող նման հանդիպումների եւ քննարկումների մասին որեւէ հաղորդագրություն չի տարածում եւ չի մեղադրում ԱՄՆ-ին՝ Հայաստանի ներքին գործերին միջամտելու փորձի կամ Հայաստանի դեմ սանձազերծած հիբրիդային պատերազմի համար: Հայաստանի իշխանությունները տեղեկացված են, որ ոչ միայն ռուսական, այլեւ ամբողջ հայկական սփյուռքն է դեմ իրենց վերարտադրությանը, բայց շարունակում են մեղադրել միայն ռուսահայությանը, որն իբրեւ թե ռեժիմի դեմ պայքարի գործում համագործակցում կամ հրահանգավորվում է Ռուսաստանի հատուկ ծառայությունների կողմից: Եվ այդ հարցի շահարկումը շարունակում է նոր թափ ստանալ:

Սա ունի երկու պատճառ. ԱՄՆ-ում եւ Եվրոպայում ապրող ՀՀ քաղաքացիներն ունեն ոչ լեգալ կամ կիսալեգալ կարգավիճակ, նրանք կա՛մ փախստականներ են, կա՛մ ընդհանրապես որեւէ կարգավիճակ չունեն եւ, հետեւաբար, անգամ ամենամեծ ցանկության դեպքում չեն կարող միայն քվեարկությանը մասնակցելու համար գալ Հայաստան: Նրանց մեծ մասն այդ երկրներ է հասել ոչ օրինական ճանապարհով՝ ծախսելով հսկայական գումար, եւ Հայաստան գալու դեպքում չեն կարողանա հետ վերադառնալ: Դրա համար ԱՄՆ-ից եւ ԵՄ-ից վտանգ չկա կամ վտանգը մինիմալ է: Մինչդեռ Ռուսաստանում ապրող ՀՀ քաղաքացիները հանգիստ կարող են 1-2 օրով գալ Հայաստան, քվեարկել եւ հետ վերադառնալ: Մյուս պատճառը, որ իշխանությունը կենտրոնացել է հենց ռուսահայության վրա, այն է, որ ռեժիմի ներկայացուցիչները փորձում են աշխարհի մյուս երկրներում ապրող մեր հայրենակիցներին համոզել, որ Փաշինյանի ռեժիմին դեմ է ռուսական անվտանգության դաշնային ծառայությունը՝ ՓՀԾ-ն, հետեւաբար, եթե դուք նույնպես դեմ եք փաշինյանական ռեժիմի վերարտադրությանը, ապա դրանով դուք ուղղակի կամ անուղղակի աջակցում եք ռուսական հատուկ ծառայությունների ծրագրերի իրագործմանը: Նման պրիմիտիվ քարոզչությունը, իհարկե, մարդկանց մոտ ծիծաղ է առաջացնում:

Ինչ վերաբերում է Ռուսաստանին եւ այնտեղ բնակվող հայությանը, ապա, այնտեղից ստացվող տեղեկությունների համաձայն, այնտեղ եւս տեղի են ունենում հավաքներ եւ նախընտրական քննարկումներ, որոնց հաճախ մասնակցում են Հայաստանից գնացած ընդդիմադիր կուսակցությունների ներկայացուցիչներ կամ համախոհներ: Քննարկումների հիմնական թեման անձնագրերի վավերականության ժամկետների ստուգումն է, Ռուսաստանում ապրող ՀՀ բազմաթիվ քաղաքացիներ ունեն ՌԴ քաղաքացիություն, եւ հաճախ նրանց հայկական անձնագրերի վավերականությունն ավարտված է, ինչը թույլ չի տա մասնակցել քվեարկությանը: Մարդկանց կոչ են անում՝ մինչեւ քվեարկությունը լուծել այդ հարցը, որ Հայաստան գալու դեպքում նման խնդիր չառաջանա: Ինչ վերաբերում է ինքնաթիռի տոմս գնելուն կամ ընտրակաշառք բաժանելուն, նման հանդիպմանը մասնակցած մեր մի զրուցակից հայտնեց, որ, ընդհակառակը՝ հենց իրենք են Հայաստանից եկած գործիչներին ֆինանսական աջակցություն առաջարկում, որից նրանք հրաժարվում են՝ բացատրելով, որ այս փուլում իրենց ամենամեծ աջակցությունը կլինի քվեարկության օրը վավեր անձնագրերով Հայաստանում լինելը եւ քվեարկությանը մասնակցելը:

Այս ամենը վկայում է, որ ամբողջ աշխարհի հայությունը միավորվել է մի գաղափարի շուրջ՝ Հայաստանն ազատել Փաշինյանի ռեժիմից, ինչը հնարավորություն կտա փրկել Հայաստանը եւ հայության միասնական գոյությունը: Մարդիկ պատրաստ են այդ նպատակի համար զոհաբերել նաեւ իրենց ֆինանսական միջոցները եւ ժամանակը:



Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ԿՈՂԲ

ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ԱՎԱԳԱՆԻՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՀՐԱՎԱՆԳԸ ՉԻ ԿԱՏԱՐԵԼ

Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության պետ Տաթեւիկ Սարուխանյանը Նոյեմբերյան համայնքի ավագանուն առաջարկել է հայց ներկայացնել դատարան, որը վերաբերում է Հայաստան-Վրաստան միջպետական ճանապարհի եզրին գտնվող «Հայոց օջախ» ռեստորանին: Գրությունում նշված է հարցի պատմությունը:

Տավուշի նախկին մարզպետ, Քաղաքաշինության կոմիտեի նախկին նախագահ Արմեն Ղուլարյանի 2008թ. հուլիսի 14-ի որոշմամբ «Հայոց օջախ» ռեստորանի զբաղեցրած եւ սպասարկման համար անհրաժեշտ 7166.0 քմ տարածքն ուղղակի վաճառքով ռեստորանի սեփականատեր Հ. Բարսեղյանին է վաճառվել՝ 1 միլիոն 31 հազար 904 դրամ արժեքով: Հիմք ընդունելով այդ որոշումը՝ 2008թ. հուլիսին իրականացվել են ռեստորանային համալիրի զբաղեցրած հողամասի չափագրման աշխատանքներ, որը հաստատվել է մարզպետի կողմից: «Հայոց օջախ» համալիրը գտնվել է համայնքի վարչական սահմաններից դուրս, հողամասի նպատակային նշանակությունը նշվել է՝ հասարակական կառուցապատում: Այդ հողամասի առքուվաճառքի պայմանագրի կնքումը եւ վավերացումը տեղի են ունեցել 2010թ. դեկտեմբերի 28-ին, Նոյեմբերյանի նոտար Վասակ Ամիրաղյանի կողմից: Բայց Կադաստրի կոմիտեի 2013թ. հոկտեմբերի 23-ի ծանուցման համաձայն՝ հողամասի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը 2013թ. հոկտեմբերին կասեցվել է, քանի որ պարզվել է, որ անտառային տարածք է: Այնուհետեւ, Տավուշի մարզպետարանի կողմից գործն ուղարկվել է կառավարության՝ հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովին: Հանձնաժողովը 2014թ. մարտի 28-ի թիվ 35 եզրակացությամբ տվել է դրական եզրակացություն, որով նախատեսվել է Կողբի՝ պետական սեփականություն հանդիսացող անտառային հողերից 0.7166 հա հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա՝ հասարակական կառուցապատման նշանակության (ռեստորանային համալիր):

Կողբի ավագանին, հիմք ընդունելով ՀՀ կառավարության հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2014 թ. մարտի 28-ի դրական եզրակացությունը, 2014 թ. ապրիլի 25-ին այդ հողամասի նպատակային նշանակությունը փոխել է հասարակական կառուցապատման, եւ Կադաստրի կոմիտեն 2014թ. մայիսի 7-ին գրանցել է այն, իսկ Հ. Բարսեղյանը եւ նրա կինը՝ Թամարա Անանյանը, ճանաչվել են համասեփականատերեր: Ապա՝ 2014թ. հունիսի 9-ին, Կադաստրի կոմիտեի «Նոյեմբերյան» գրասենյակում կնքված նվիրատվության պայմանագրով այդ հողամասը, դրա վրա կառուցված 329.31 քմ մակերեսով շենք-շինություններն անհատույց հանձնել են «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Նոյեմբերյանի անտառտնտեսություն» մասնաճյուղի տնօրեն Վ. Չիլինգարյանին:

Դատախազության առաջարկի մեջ նշված է, որ Տավուշի մարզպետի 2008 թ. հուլիսի 14-ի թիվ 75-Ա որոշման կայացման պահին գործող Հողային օրենսգրքի 25-րդ հոդվածի համաձայն՝ անտառային հողերը կարող են տրամադրվել վարձակալությամբ շենք-շինություններ կառուցելու նպատակով՝ բացառապես անտառային տնտեսության կարիքների համար: Իսկ ընդհանուր օգտագործման տարածքները, այդ թվում՝ ընդհանուր օգտագործման համար նախատեսված կանաչ տարածքները, չեն կարող փոխանցվել սեփականության իրավունքով այլ անձի եւ ենթակա չեն օտարման: Դատախազությունը համայնքի ավագանուն գրել է. «Տավուշի մարզպետի 14.07.2008-ի թիվ 75-Ա որոշմամբ խախտվել են պետության (համայնքի) շահերը, ուստի՝ առաջարկում եմ սույն առաջարկությունը ստանալու պահից ողջամիտ ժամկետում պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցել իրավասու դատարան եւ հարուցված հայցի մասին նույն օրը հայտնել ՀՀ գլխավոր դատախազություն, իսկ հայց չհարուցելու պարագայում նույն ժամկետում այդ մասին տեղեկացնել ՀՀ գլխավոր դատախազությանը»:

Մարտի 26-ին Նոյեմբերյանի ավագանին քվեարկությամբ (11 կողմ, 6 ձեռնպահ) որոշել է հայց չտանել դատարան՝ Տավուշի մարզպետի 2008 թ. հուլիսի 14-ի թիվ 75-Ա որոշման հիմքով, եւ այդ որոշման մասին տեղեկացնել Գլխավոր դատախազությանը: Այդ որոշմանը ավագանու ՔՊ խմբակցության անդամները ձեռնպահ են քվեարկել: Ավագանու որոշման հիմքում նշված է. «ՏԻՄ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի համաձայն՝ համայնքի ավագանին դատական կարգով կարող է վիճարկել ՀՀ սահմանադրության, օրենքներին եւ համայնքի ավագանու որոշումներին հակասող՝ համայնքի ղեկավարի որոշումները: Մինչդեռ սույն դեպքում առաջարկվում է վիճարկել ՀՀ Տավուշի մարզպետի 14.07.2008 թ. 75-Ա որոշումը»:

Այսինքն՝ ավագանին իրավունք ունի հայց ներկայացնել համայնքի ղեկավարի որոշումների հիման վրա, բայց իրավունք չունի մարզպետի որոշմանը դեմ գնալ, եւ դատախազության պահանջն օրինական չէ:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

Եվրոպան բախվել է իրանական ճգնաժամին

Եվրոպական երկրներն արդեն սկսել են առերեսվել մերձավորարեւելյան էսկալացիայի տնտեսական բացասական հետեւանքներին,- գրում է Bloomberg պարբերականը: Համաձայն հրապարակման, հակամարտությունը ռիսկային իրավիճակ է ստեղծել արդյունաբերական եւ տնտեսական սեկտորի համար, ավելացրել քաղաքական համակարգերի լարվածությունը: Եվրոպական այնպիսի երկրներ, ինչպիսիք են՝ Գերմանիան ու Իտալիան, կանխատեսում են արտադրության նվազում եւ էներգակիրների գների աճ: Մի շարք կառավարություններ արդեն տնային տնտեսություններին աջակցման ծրագրեր են ներդնում: «Ակնհայտ է, որ հատկապես տուժելու են այն սեկտորները, որոնք ավելի էներգածախս են»,- ասել է փորձագետ, Barclays բանկի հետազոտական բաժնի ղեկավար Քրիստիան Քելերը եւ ընդգծել, որ որքան շարունակվի հակամարտությունը, այնքան ավելի շատ կազդի տնտեսության բոլոր ոլորտների եւ բոլոր ապրանքների ու ծառայությունների գների վրա: Bloomberg-ը մանրամասնում է, որ Հորմուզի նեղուցի փակ լինելը հատկապես սկսել է հարվածել գերմանական քիմիական արդյունաբերությանը: Խոշորագույն SKW ընկերության գործարաններից մեկն արտադրությունը կրճատել է 85 տոկոսով: Hapag-Lloyd AG խոշոր բեռնափոխադրումային ընկերությունից էլ հայտնել են, որ ամեն օր 40-50 միլիոն դոլարի հավելյալ ծախս են կատարում՝ բեռների պահպանման, ապահովագրման ու վառելիքը թանկացված գներով ձեռք բերելու վրա: Թանկացումները կտարածվեն մատակարարումների ամբողջ շղթայի վրա: Կյանքը կթանկանա բոլոր եվրոպացիների համար՝ եզրակացնում է պարբերականը: Ֆրանսիական վիճակագրական ծառայությունն էլ մինչեւ հաջորդ տարի արագ գնաճ է ակնկալում: Կենսամակարդակի թանկացման դեմ բրիտանական կառավարությունը սկսել է արդեն պայքարել: Bloomberg-ը գրում է նաեւ, որ այժմ Եվրամիությունը նաեւ ռազմավարական խնդրի առաջ է կանգնած, քանի որ, մի կողմից, ամերիկյան աջակցությունն է նվազում, մյուս կողմից՝ սրվում է Չինաստանի հետ մրցակցությունը:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔՆ Է՝ ԼԻՆԵԼ ԻՐ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԿՈՂՔԻՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆԵԼ ՆՐԱՆՑ ՇԱՀԵՐԸ

«Դրապարակի» զրուցակիցն ադրբեջանական գերությունից 2 ամիս առաջ վերադարձած **Գեւորգ Սուջյանն** է:

- Հունվարի 14-ին Բաքվի գերությունից ազատված չորս հայերից թերեւս ամենահրապարակային ակտիվությամբ դու ես աչքի ընկնում: Եթե մյուսները գուցե կաշկանդված են, Վիգեն Էուլջեբյանն առողջական լուրջ խնդիրներ ունի եւ այլն, ապա դու խոսում ես ուղիղ եւ հասցեական: Կարծես թե միտքդ մեր մյուս գերի եղբայրների հետ է դեռ:

- Այո, ես շատ եմ մտածում այնտեղ գտնվող մեր տղաների մասին. այլ կերպ չեմ կարող:

- Սկզբում շնորհակալություն էիր հայտնում ՀՀ իշխանություններին, ապա սկսեցիր այնպիսի մտքեր հայտնել, որոնք կարող են ՀՀ իշխանություններին դուր չգալ, չե՞ս վախենում, որ կարող են անշնորհակալ համարել քեզ տուն վերադարձնելու իրենց ջանքերի դիմաց, գուցե նաեւ՝ հետապնդել:

- Ես ազատ արտահայտում եմ մտքերս՝ պահպանելով բոլոր մարդկային եւ բարոյական նորմերը, չվիրավորելով ոչ մեկին: Դրա համար վախենալու ոչինչ չունեմ: Ես համոզված եմ, որ պետության պարտքն է՝ լինել իր քաղաքացիների կողքին եւ պաշտպանել յուրաքանչյուրի շահերը, երբ դա անհրաժեշտ է՝ ինչպես, օրինակ, իմ պարագայում էր:

- Օրինակ, անընդունելի եւ նսեմացուցիչ ես համարում, եւ ճիշտ էլ անում ես, որ Ալիեւին շնորհակալություն են հայտնում՝ այն դեպքում, երբ Ադրբեջանի բանտերում ունենք բռնի եւ ապօրինի պահվող պատանդներ: Ո՞ւմ էր ուղղված խոսքդ:

- Ալիեւին շնորհակալություն հայտնելու մասին իմ դիրքորոշումը հստակ է. դա ինձ համար անընդունելի է՝ թե՛ մեր պատանդների այնտեղ գտնվելու, թե՛ ոչ տեղին արտահայտությունների ֆոնին:

- Պարզ է, որ շատ բան չես կարող կամ առնվազն անվտանգային նկատառումներով իրավունք չունես բաց տեքստով ասելու: Բոլոր դեպքերում, Բաքվում ապօրինաբար բանտարկված մեր մյուս հայրենակիցների վերադարձի շանսեր տեսնո՞ւմ ես. արդյո՞ք այդ հարցը քաղաքական սակարկության, շահարկության հարց չի դարձել Հայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարների միջեւ:

- Այո, մեր տղաների վերադարձի շանսեր կան: Բայց պետք է գիտակցենք, որ Ալիեւը բոլորիս է սակարկել. հենց այդ պատճառով մինչ օրս բռնի պահում է մեր պատանդներին իր բանտերում:

- Անկախ իշխանությունների նկատմամբ քո վերաբերմունքից, անկախ քաղաքական եւ քաղաքացիական կողմնորոշումից, ինչպե՞ս կգնահատես նախընտրական շրջանում Փաշինյանի ակնարկը, թե իրենց իշխանության չընտրվելու դեպքում աղետաբեր պատերազմ կլինի:

- Ինձ թվում է՝ սա այն վերլուծության արդյունքն է, երբ ընդդիմությունը հայտարարում է, որ Ղարաբաղի հարցը փակված չի համարում: Եվ, իմ կարծիքով, իրենց հնարավոր հաղթանակի դեպքում փորձելու են մանեւրել Ռուսաստանի հետ Ղարաբաղի հարցով, ինչը կարող է ունենալ լուրջ հետեւանքներ:

- Տեւական կալանքից հետո կյանքդ վերադառնում է բնականոն հուն. ինչո՞վ ես զբաղվում այժմ, ի՞նչ ծրագրեր ու նպատակներ ունես:

- Ես զբաղվում եմ բիզնեսով եւ շարունակելու եմ այն ընդլայնել, որպեսզի կարողանամ ավելի մեծ ներդրում ունենալ իմ երկրի զարգացման մեջ:

- Պատկերացնենք, թե Ադրբեջանում պատանդառված ու ազատազրկված մեր եղբայրները լսում են քեզ. ի՞նչ է այս մի քանի ամսվա մեջ կուտակվել քո հոգում, ի՞նչ ասելիք-ուղերձ կուզես հնչեցնել:

- Չգիտեմ՝ մեր տղաները լսում են, թե՝ ոչ, բայց եթե լսում են, ուզում եմ, որ իմանան՝ իրենք մենակ չեն: Մենք հոգով իրենց հետ ենք, եւ պետությունն անում է ամեն բան՝ նրանց հնարավորինս շուտ վերադարձնելու համար:

Արա ԱԼՈՅԱՆ

ՀՀ ժողովրդական արտիստ, Վանաձորի պատվավոր քաղաքացի, Վանաձորի պետական համալսարանի պատվավոր պրոֆեսոր, Երեւանի կինոյի եւ թատրոնի ինստիտուտի Լոռու մասնաճյուղի հիմնադիր ու երկարամյա տնօրեն **Հակոբ Ազիզյանի** հետ զրույցը ոչ թե հարցազրույցի նպատակով էր, այլ ուզում էի որպիսությունն իմանալ: Մինչ նա սուրճ էր պատրաստում, ես նայում էի Բազում թաղամասի՝ քաղաքի ամենաբարձրադիր հատվածներից մեկում տեղակայված նրա բնակարանի պատուհանից դուրս եւ հմայվում տեսարանով. ձյունից ազատվող լանջեր, թավշյա կանաչով պատվող սար ու ձորակներ, բողբոջող ծառեր, քչքչացող առուներ:

- Գեղեցիկ է, չէ՞,- նկատելով հիացմունքս՝ հարցրեց Վարպետը:- Գիտե՞ս՝ ինչ մեծ մխիթարություն է ինձ համար երկար-երկար նայել պատուհանից դուրս: Այդ պահին մոռանում եմ մեր կյանքի դառնությունները, ինքս ինձ մխիթարում եմ ծառուծաղկին նայելով: Միեւնույն ժամանակ հարց եմ տալիս ինձ. այս ինչ օրի հասավ մեր ժողովուրդը, ինչ հրաշք պետք է տեղի ունենա, որ մենք ինչ-որ կերպ ազատվենք մեր գլխին թափվող աղետներից:

- Վարպետ, ո՞ր աղետները նկատի ունեք:

- Աղետներն անհաշիվ են: Գլխավոր աղետը ՀՀ վարչապետի աթոռին սոսնձված անձն է՝ Նիկոլ անունով կատարյալ հիվանդ մեկը: Ինչպե՞ս մեր իմաստուն ժողովուրդը խաբվեց նրա սին, դատարկ խոսքերին, ինչպե՞ս գահին բազմեցրեց այդ «տիեզերական քաջնազարին»՝ մի անգրագետի, որը եկավ ու երկիրն իջեցրեց իր մակարդակին: Մենք դրա՞ն էինք արժանի: Թուրքերին հրավիրում է մեր երկիր, դռները լայն բացած ասում է՝ եկեք, վերստին տիրացեք ձեր հողերին, ձեր շեներին: Դարձյա՞լ թուրքական անուններով գյուղեր ու քաղաքներ ենք ունենալու: Օրինակ՝ իմ մանկության գյուղը՝ Սեւանի ափին գտնվող Գեղահովիտը, պիտի իր հին անունո՞վ կոչենք՝ Ղարանլուղ, որը նշանակում է «Մութ ձոր»: Այսպես չի կարող շարունակվել: Պետք է ժողովրդին բացատրել, որ նրա մնալու պարագայում մենք կորցնելու ենք մեր հայրենիքը, մեր լեզուն, մեր պետականությունը:

- Իսկ ո՞վ պետք է դա բացատրի ժողովրդին:

- Առաջին հերթին՝ մշակույթի գործիչները: Եվ հենց ես՝ այդ հերթից էլ առաջ: Դու լրագրող ես, ահա գրիչ ու թուղթ, սկսենք ինձնից: Ես ոչ մի խորհուրդ չեմ ուզում տալ վարչապետ կոչվածին: Նա ոչ մեկին չի լսում, ոչ մի խորհուրդ չի ընդունում: Նրան բնութագրելը նույնիսկ չափազանց դժվար է: Ինչ մակդիր էլ օգտագործես՝ լիարժեք չի լինի: Ես կինոյում խաղացել եմ 17 դեր, թատրոնում՝ ավելի քան 200: Շատ բացասական կերպարներ եմ կերտել, բայց իմ խաղացած բոլոր բացասական հերոսները միասին չեն կարող հասնել նրան: Նույնիսկ Շեքսպիրի ամենաժահր հերոս Յագոն նրա համեմատ կարող է խեղճուկրակ «չմարդ» թվալ: Ով էլ փորձի անդրադառնալ այդ կերպարին՝ Հայաստանի այսօրվա վարչապետին, իսկապես եզակի ստեղծագործություն կստեղծի: Ասացի «դավաճան» ու սխալվեցի: Ինչ դավաճանի մասին է խոսքը: Նա չի դավաճանում իր տերերին՝ Ալիեւին, Էրդողանին: Նա բացահայտ դուրս է եկել մեր ժողովրդի դեմ եւ պատերազմում է մեր դեմ՝ նրանց հետ ուս-ուսի տված: Նա օտար երկրի բացահայտ սպասարկու է: Ո՞վ չի հասկանում, որ գործ ենք ունեցել տիեզերական մասշտաբի ստախոսի, բանսարկուի ու խաբեբայի հետ: Նրա բոլոր թիրախները սպառվել են, եւ հիմա էլ մեզ սպառնում է՝ ասում է՝ պատերազմ կլինի, եթե իրեն չընտրենք: Գիտակցված ձեւով 5 հազար հայորդիների կյանքը զոհաբերած մարդը քանի անգամ հայտարարեց ու պարծեցավ, թե «խաղաղություն է բերել», այն էլ՝ հարյուր տարով: Այդ ի՞նչ խաղաղություն է, որ մի քանի ամիս անց արդեն պատերազմի մասին է խոսվում: Եվ ընդհանրապես՝ ի՞նչ խաղաղություն է դա, որը կախված է իշխանության պահպանությունից: Այդ «խաղաղությունը» փուչիկ չէ՞, որ ամեն պահ կարող է պայթել:

Պրահայում Արցախի ճանաչումից 2 ամիս անց Ալիեւը հայտարարեց, որ այս տարածքում Հայաստան երբեք չի եղել, եւ այսօրվա Հայաստանն իրենց հողն է: Ավելին՝ նա ընդգծեց, որ սա իրենց օրակարգում է, եւ պետք չէ ժամանակ կորցնել: Դրանից հետո այս թեզը մտավ, թե՛ նիկոլական, թե՛ «ադրբայջանական» կրթական համակարգ՝ դպրոցներ, բուհեր, եւ լայն տարածում է ստանում: Այս թեզն ինձ ցնցել է եւ շարունակում է ցնցել մինչեւ այսօր: Այն ազդում է նաեւ իմ առողջության վրա: Ես հասկանում եմ դրա վտանգը, դրա մասշտաբները եւ տեսնում եմ ամբողջ ռիսկը: Սա հստակ զավթողական, պատերազմական հայեցակարգ է:

Ո՞Վ ՉԻ ՀԱՍԿԱՆՈՒՄ, ՈՐ ԳՈՐԾ ՈՒՆԵՆՔ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՄԱՍՇՏԱԲԻ ՍՏԱԽՈՍԻ ՈՒ ԲԱՆՍԱՐԿՈՒԻ ՀԵՏ

Մեր իշխանությունները ոչինչ չեն անում դա չեզոքացնելու համար, մինչդեռ դա կարելի էր ուղղել հենց Ալիեւի դեմ: Փոխարենը մեր երկրում տարածվում են նույն թեզերը՝ «հայելային» բնույթի մասին խոսակցություններով: Ասում են՝ մի նեղվեք, որ ասում են «Իրեւան», «Գյոկչայ», «Ուչմիաձին»: Սա սարսափելի է: Ի՞նչ հայելային, երբ հենց դուք եք ճանաչել Արցախն Ադրբեջանի կազմում: Սա ադրբեջանական զավթողական հայեցակարգի բացահայտ լեգիտիմացում է: Ակնհայտ է, որ ամեն ինչ այլեւս չի էլ թաքցվում: Ստացվում է՝ մեր պետական միջոցներով իրականացվում է այդ թեզերի տարածում: Սա խայտառակություն է, ուղղակի աբսուրդ է: Այս հարցը դամոկլյան սրի պես կախված է մեր ժողովրդի գլխին եւ թույլ չի տալիս մտածել արվեստի ու մշակույթի խնդիրների մասին: Ամեն ինչ բարձիթողի վիճակում է: Հովհաննես Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոնը, որը Լոռու մայր թատրոնն է, օր-օրի կորցնում է իր դեմքը: Խաղացանկից դուրս են հանվել բարձրարժեք բեմադրություններ՝ «Ռուզանը», Զորյանի «Խնձորի այգին», Շիրվանզադեի «Չար ոգին», «Երկիր հայրենին» եւ այլ գործեր: Եթե նման գործերը դուրս են գալիս խաղացանկից, նշանակում է՝ թատերական կյանքը վերջին շնչում է: Ի՞նչ են մտածում թատրոնի ղեկավարները: Ես բազմիցս առաջարկել եմ իմ օգնությունը՝ վերականգնելու այդ արժեքավոր գործերը, որոնք բեմադրվել են ճանաչված ռեժիսոր, ՀՀ ժողովրդական արտիստ Վահե Շահվերդյանի ջանքերով, բայց արձագանք չկա: Փոխարենը բերվում են անկարեւոր, կասկածելի գաղափարախոսությամբ, երեւի «կասսային» մուտքեր բերող ստեղծագործություններ, որոնք քիչ բան են տալիս հանդիսատեսին: Բայց սա զարմանալի չէ: Երբ ամբողջ երկրում են արժեքները քամահրվում, մշակույթն էլ է դառնում նույնը:

Վերջում Վարպետը դիմում է ժողովրդին. «Եթե մենք ընտրենք այդ մարդուն, դա կնշանակի՝ կորած ենք: Մենք ունենք հազար անգամ ավելի արժանի թեկնածուներ: Պետք է ընտրել նրանցից որեւէ մեկին, բայց ոչ երբեք Նիկոլին»:

ՀԱՅԱՑՔ



Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

«ԱԳԱՐԱԿԻ ՀԱՆՔՇԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ» ԲԲԸ ԾԱՆՈՒՑԱԳԻՐ

ՀԱՐԳԵԼԻ ԲԱԺՆԵՏԵՐ

Տեղեկացնում ենք Ձեզ, որ 2026թ. մայիսի 8-ին, ժամը 12:00-ին ՀՀ Մեղրի, Ագարակ, Սայաթ-Նովայի 12 հասցեում տեղի կունենա «ԱԳԱՐԱԿԻ ՀԱՆՔՇԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ» ԲԲԸ բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովը

2026Թ. ՄԱՅԻՍԻ 8-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՕՐԱԿԱՐԳ

1. Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի համախմբման արդյունքների հաստատում

2. Ընկերության կանոնադրության փոփոխության հաստատում:

Բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովին մասնակցողների գրանցումն սկսվում է 30 րոպե շուտ՝ ժամը 11:30-ին:

Բաժնետերերը բաժնետերերի ընդհանուր ժողովում քննարկվող հարցերին վերաբերող տեղեկություններին եւ նյութերին կարող են ծանոթանալ՝ դիմելով 2026թ. ապրիլի 1-ից յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը 12:30-ից մինչեւ 16:30, զանգահարելով 0(43)560656 կամ 0(99)560696 հեռախոսահամարին:

Տրամադրվող տեղեկությունների եւ նյութերի ցանկը հետեւյալն է՝

ա. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի օրակարգի հարցին կողմ քվեարկելու դեպքում ընդունվող որոշումների նախագիծ,

բ. Կանոնադրության փոփոխության նախագիծ:

Տեղեկացնում ենք Ձեզ նաեւ, որ օրակարգի երկրորդ հարցին դեմ քվեարկող կամ քվեարկությանը չմասնակցող բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն պահանջել իրենց պատկանող բաժնետոմսերի կամ դրանց մի մասի հետգնում «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 57-րդ եւ 58-րդ հոդվածներով սահմանված կարգով: Բաժնետոմսերի հետգնման պահանջի իրավունքի իրականացման դեպքում անհրաժեշտ է լինելու ժողովից հետո 45 օրվա ընթացքում Ընկերությանը ներկայացնել համապատասխան գրավոր դիմում:

Խնդրում ենք Ձեզ ներկա լինել բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովին

«ԱԳԱՐԱԿԻ ՀԱՆՔՇԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ» ԲԲԸ գլխավոր տնօրեն **Էլեն Նաուլոկիենե**

«ՎԱՐԴԻ ԱՆՈՒՆԸ». ԴԵՏԵԿՏԻՎ, ՈՐՆ ԱՐԺԵ ԴԻՏԵԼ

«Վարդի անունը» պատմական դետեկտիվը, որը նկարահանել է Ժան-Ժակ Աննոն՝ 1986 թվականին, 20-րդ դարի պատմափիլիսոփայական արձակի ամենից կարեւոր էկրանավորումներից է: Կինոնկարի հիմքում Ումբերտո Էկոյի համանուն վեպն է՝ հրատարակված 1980 թվականին, որն ինքնին բարդ ստեղծագործություն է: Դրանում համադրված են դետեկտիվի, պատմավեպի եւ աստվածաբանական երկի տարրերը:

Թե՛ Էկոն՝ վեպը գրելիս, եւ թե՛ Աննոն՝ էկրանավորելիս, հիմնվել են միջնադարագիտության, եկեղեցու պատմության եւ սխոլաստիկայի մասին եղած գիտական ուսումնասիրությունների վրա: Էկոն, լինելով նաեւ միջնադարյան մշակույթի եւ սեմիոտիկայի մասնագետ, ակտիվորեն օգտվել է այնպիսի պատմաբանների ստեղծագործություններից, ինչպիսիք են Ժակ լը Գոֆը կամ Էթյեն Ժիլսոնը: Դա թույլ է տվել նրան՝ հավաստի կերպով վերստեղծել 14-րդ դարի եվրոպական մտավոր միջավայրը, ներառյալ նաեւ Հռոմի կաթոլիկ եկեղեցու վերնախավի եւ ֆրանցիսկյան վանականների միջեւ եղած բանավեճը՝ կապված առաքյալների աղքատության հետ: Աննոն փորձել է վեպի կոնտեքստը վավերական կերպով վերստեղծել: Կինոնկարում գործողությունները ծավալվում են 1327 թվականին՝ Բենեդիկտյան վանքում: Գլխավոր հերոսը ֆրանցիսկյան վանական Վիլհելմ Բասկերվիլցին է, որի կերպարը մարմնավորել է Շոն Քոներին: Նա մի տեսակ նման է Շերլոք Հոլմսին, սակայն՝ միջնադարի մութ ժամանակներ տեղափոխված: Ունի աշակերտ՝ Ադսոն անունով, որի կերպարում հանդես է եկել Քրիստիան Սլեյթերը: Վանքում տեղի են ունենում առեղծվածային սպանություններ, եւ Վիլհելմ Բասկերվիլցին պետք է հետաքննի դրանք ու բացահայտի հանցագործին: Կինոյի մասնագետները նկատում են, որ դետեկտիվ ժանրն այս ֆիլմում միայն արտաքին ծխածածկույթն է, քանի որ թե՛ վեպում եւ թե՛ կինոնկարում ավելի խոր անալիզի են ենթարկվում այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են ճշմարտությունը, գիտելիքը կամ իշխանությունը: Հիմնական կոնֆլիկտը ծավալվում է ողջամիտ կամ բանական իմացականության եւ եկեղեցական դոգմատիկ հեղինակության միջեւ: Հատկապես կարեւոր եւ սիմվոլիկ նշանակություն ունի գրադարանը: Այն ներկայացված է նաեւ որպես լաբիրինթոս, որը խորհրդանշում է իմացականության, գիտելիքի բարդ կառուցվածքն ու շերտայնությունը: Ֆիլմում հանդես են եկել Շոն Քոներին, Քրիստիան Սլեյթերը, Ռոն Փերլմանը, Մայքլ Լոնսդեյլը, Ֆյոդոր Շալյապին-կրտսերը (ռուս մեծ օպերային երգչի որդին), Վիլյամ Հիքին եւ այլք:



Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«Այսքան չարիք թէ մոռանան մեր որդիք,
Թող ողջ աշխարհ հային կարդայ նախատինք»
Ավետիք Իսահակյան

ՍՐԱՆՑ ԺԱՄԱՆԱԿՆ ԱՅԼԵՎՍ ՍՊԱՌՎԱԾ ՊԵՏՔ Է ՀԱՄԱՐԵԼ

Վահան ԴԱՐԲԻՆՅԱՆ

Ժողովուրդների հիշողությունը նրանց ժառանգության կարեւոր բաղադրիչն է: Պատմական, մշակութային կամ աշխարհագրական հիշողությունների վրա են խարսխվում նրանց աշխարհընկալումներն ու հասարակական եւ ընկերային տարբեր ուղղությունները: Ժողովուրդներն իրենց ապագան ուրվագծում եւ ըստ այնմ առաջ են շարժվում, հիմք ունենալով իրենց անցյալի հիշողություններն ու նախնիներից ժառանգած արժեքները: Առանց պատմական հավաքական հիշողությունների ժողովուրդ չկա: Եթե երբեւէ այդպիսիք պատահեն, դրանք կարող են լինել ժամանակավրեպ եւ բռնազբոսիկ գաղափարախոսությունների կամ այլ նպատակներ հետապնդող բռնակալների վարած քաղաքականության արդյունքում: Այդպիսի քաղաքականության լավագույն օրինակներից մեկը Սովետական Միությունն էր, որ ամբողջ 70 տարի փորձեց բռնությամբ մաքրել կամ մոռացության տալ կայսրությանը բռնակցված ժողովուրդների ազգային կրոնական եւ պատմական հիշողությունները: Իրենց ասելով՝ նրանք փորձում էին կերտել սովետական քաղաքացու կերպար:

Ֆրանսիայի նախագահ Դը Գոլը, Սովետական Միություն այցի ժամանակ արտասանած իր ճառում երբ ասաց՝ «ողջույն սովետական ժողովուրդներին», անմիջապես հանդիպեց օրվա ղեկավարության բողոքին, որ իբր Սովետական Միության մեջ չկան ժողովուրդներ, այլ կան միայն սովետական քաղաքացիներ... Հայաստանում կազմվել էր տխրահռչակ «պրոլետարական ճարտարապետներ»-ի մի խմբակ, որոնք խոչնդոտում եւ լուրջ բարդություններ էին առաջացնում Ալեքսանդր Թամանյանի շնորհիվ ազգային մոտիվներով ու շնչով նախագծվող եւ իրականացվող հայկական ճարտարապետության գործում: Ըստ նրանց, պետք էր քանդել եւ հիշողություններից ջնջել անցյալի ժառանգությունը, որպեսզի հնարավոր լինի ստեղծել «նոր»-ը՝ սովետական ճարտարապետությունը: Հայ ժողովրդի ջարդարարներին ապաստան տալով, տասնամյակներ շարունակ նրանք փորձեցին արգելել Հայոց Ցեղասպանության մասին հիշողությունն ու պատմական անհերքելի իրողությունը: Իհարկե չհաջողեցին: Ի վերջո, ժողովրդի միահամուռ պահանջի դիմաց, 50 տարվա ուշացումով հանդերձ, ստիպված եղան տեղի տալ:

Նույնանման անհաջող փորձեր են անում մերօրյա, այսպես կոչված, իշխանությունները: Էժանագին ամբոխավարությամբ ու երբեմն էլ ուղղակի զավեշտալի արարքներով փորձում են համոզել ժողովրդին, թե իբր իրենք մտահոգված են Հայաստանի ժողովրդի ներկայի ու ապագայի զարգացման հարցերով միայն՝ երկիրը հեռու պահելով, իրենց կարծիքով, ավելորդ քաշքշուկներից: Նրանց ցանկությունն է, որ ժողովրդին մոռացնել տան եւ նրա հիշողությունից մաքրեն իրենց իսկ անճարակության պատճառով կրած կորուստները: Դեռ ավելին. իրենց կործանման մոտալուտ վտանգից սարսափած, ժողովրդին ահաբեկում են՝ ասելով, որ եթե իրենք չլինեն, պատերազմ կլինի: Մոռանալով, որ հենց իրենց վարած երկչոտ ու անհեռատես քաղաքականության հետեւանքով էր, որ թշնամին պարարտ հող գտավ՝ մեր դեմ պատերազմ սկսելու, որով եւ մեր հերոսների արյան գնով վաստակածը նվաստացուցիչ կերպով թշնամուն հանձնելով, մեզ դարձրին գլխիկոր ու պարտված մի ժողովուրդ: Նրանք իրենց վարած քաղաքականությամբ ուզում են ժողովրդին դարձնել անգլուխ եւ անդեմ զանգված, որն օրվա հացը վաստակելուց բացի կյանքում այլ ձգտում կամ տեսլական չունենա: Ճիշտ այնպես, ինչպես իրենց աջակիցներն են, որոնց թվաքանակը, բարեբախտաբար, օրեցօր նվազում է:

Հետպատերազմյան առաջին ընտրության ժամանակ, ժողովրդի հոգեբանական փշրված պայմաններում ցուցաբերված կրավորական պահվածքի պատճառով, նրանց հաջողվեց վերընտրվել ու շարունակել իրենց անհեռանկար քաղաքականությունը: Այսօր, սակայն, շատ բան է փոխվել: Ժողովուրդն այլեւս թոթափել է մոտ անցյալի կործանարար կրավորականությունը եւ ամենայն վճռակամությամբ եւ ներգործոն ներկայությամբ իր վճռական խոսքն ասելու է սրանց:

Սրանց ժամանակն այլեւս սպառված պետք է համարել:

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՁՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 31.03.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ՍՓՅՈՒՌՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՉ ԹԵ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԸ, ԱՅԼ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆ Է

Գալուստ ՍԱՐԳՍՅԱՆ

Հայաստան և Սփյուռք

Արագ փոփոխվող այս աշխարհը, անշուշտ, արմատական փոփոխությունների կենթարկի նաեւ Հայաստան-Սփյուռք հարաբերությունները: Այն, որ համահայկական միջավայրն ու Հայաստան-Սփյուռք հարաբերությունները փոփոխություններ կկրեն, դրանում կասկած չկա: Սակայն մեզ համար կարեւոր է, որ այդ փոփոխությունները գան ոչ թե ինքնահոսով, այլ բխեն մեր ծրագրերից:

Այս իմաստով, Համահայկական իրականության համար այդ փոփոխությունների ծրագրավորվածությունը կարեւոր է նրանով, որ մեր իրականությունը, Հայաստանի Հանրապետության իրականություն լինելուց բացի, նաեւ Սփյուռք ունեցող ժողովրդի իրականություն է: Եվ հենց այդ իրականությունն է պատճառը, որ մենք այսօր ստիպված ենք ինքնակազմակերպվել ոչ թե որպես առանձին վերցրած Հայաստանի Հանրապետություն, ոչ թե որպես առանձին վերցրած Սփյուռք, այլ որպես Հայաստանի Հանրապետություն եւ Սփյուռք ունեցող համաշխարհային հայություն:

Այս առումով մեզ համար, թերեւս, ավելի կարեւոր է լինելու ոչ թե այն, թե ինչ է իրենից ներկայացնելու Հայաստանի Հանրապետությունն առանձին վերցրած եւ ինչ է իրենից ներկայացնելու Սփյուռքն առանձին վերցրած, որքան այն, թե ինչ է իրենից ներկայացնելու աշխարհով մեկ սփռված հայությունը, որովհետեւ առանց կենսունակ ու կազմակերպված համաշխարհային հայության, չի կարող լինել ոչ ուժեղ Հայաստանի Հանրապետություն եւ ոչ էլ կազմակերպված Սփյուռք:

Իհարկե, Հայաստանի Հանրապետության եւ Սփյուռքի հարաբերություններում, ինչքան չէր կարելի Սփյուռքին այնպես վերաբերվել, ինչպես Հայաստանում ներդրում արած մեկին էին վերաբերվում, այդքան էլ չի կարելի նրան այնպես վերաբերվել, ինչպես պետության գործերից հեռու պահվելու արժանի ինչ-որ մեկին կվերաբերվեն: Մենք պետք է հասկանանք, որ Սփյուռքը միայն Հայաստանում ներդրումներ անելու, նրանից փող կորզելու եւ նեղության պահին նրան ապավինելու, իսկ մնացած պահերին՝ անտեսվելու համար չէ: Նա ոչ թե Հայաստանի Հանրապետության «ավելորդ» մասն է, այլ նրա մրցակցային առավելությունն ուրիշ ժողովուրդների ու ազգերի նկատմամբ:

Այո, Հայաստան-Սփյուռք հարաբերությունները պետք է վերափոխվեն: Դրանք նոր իմաստով եւ նոր բովանդակությամբ հարաբերություններ պետք է դառնան: Սակայն երբ այդ վերափոխումը Սփյուռքին՝ Հայաստանի ու իր հարեւանների միջեւ լավ հարաբերություններ ունենալու խոչընդոտի եւ ոչ թե որպես իր մրցակցային առավելությանն է վերաբերում, դա արդեն ցուցիչ է այն բանի, որ այդ վերափոխումը սխալ հունով է ընթանում: Որովհետեւ ճիշտ հունով ընթացող վերափոխման դեպքում չէին կարող չհասկանալ, որ ոչ թե Սփյուռքի պատճառով են վատացել Հայաստանի ու իր հարեւանների հարաբերությունները, այլ այդ վատ հարաբերությունների պատճառով ենք մենք Սփյուռք ունեցող ժողովուրդ դարձել, եւ Սփյուռքը մնացել է մեր թշնամի պետությունների կոկորդում:

Այս առումով, Հայաստանում պետք է հասկանան, որ Հայաստանի եւ իր հարեւանների լավ հարաբերությունների խոչընդոտը ոչ թե Սփյուռքը, այլ Հայաստանի թույլ լինելն է: Ու եթե Հայաստանում իրոք ուզում են հարեւանների հետ լավ հարաբերություններ ունենալ, ապա պետք է ոչ թե Հայաստան-Սփյուռք հարաբերությունները վատացնեն, այլ Հայաստանի ու Սփյուռքի համատեղ ջանքերով Հայաստանը հզորացնեն:

Ի գիտություն հասարակության

Հայտատու՝ «Ալավերդի արեւային կայան» ՀՈԱԿ

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 02.12.2022 N 520-Ն որոշում

Ալավերդու համայնքապետարանի «Ալավերդի արեւային կայան» համայնքային ոչ առեւտրային կազմակերպությունը (ՀՈԱԿ) մտադիր է դիմել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով՝ համայնքին պատկանող եւ ՀՈԱԿ-ին անհատույց օգտագործման իրավունքով հանձնված՝ Լոռու մարզ, Ալավերդի համայնք, գյուղ Մղարթ, փողոց 9 հողամաս 2 հասցեով գտնվող հողամասում կառուցված «Ալավերդի արեւային կայան» արեւային էլեկտրակայանից առաքվող էլեկտրաէներգիայի սակագնի սահմանման հայտով: Առաջարկվող սակագինը՝ 20,495 ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ:

«Ալավերդի արեւային կայան» ՀՈԱԿ, Զորավար Անդրանիկի փող. /Շ/ 8/1 Ալավերդի 1702, Ալավերդի, Լոռի, Հայաստան, (093) 500791, melo74@mail.ru:

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am